

մանե մէլնե էդա սանդից (գիտաւորութիւն) վազն արե (հեռացիք):

— ԶԷ չըլի, կը մեռնեմ, ասաց Լութֆիկ:

Դօրես ուստուեն էլաւ ոսկի պլազուկ (ապարանջան) առեց, կնաց մօտ Յօրէն, դորաւ էդի առջեւ էլմէլ Ֆիլօր տառց. Ա-դէբանդո մանե, մէլնե էդա պանդից վազն արե. որ տիւ չըլնիր, էնոր խաղը կանէ (խայտառակ), որ իմ լսէր լսնի, քեյ էլ ձե էլ կսպանի:

## ԾԻՄԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

### ՀԱՅՈՑ ՄԷՋ

#### Ե. ԱԱՀՅՈՒՅՆԵՐԸ

#### Ե Բ Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

Յանկանալով վերջնական կորստից ազատել հայ ազգագրութեան վերաբերեալ նիւթերը, ևս երկիր կրեցի, թէ մի դուցէ աչքիցս խուսափեն շատ ծէսեր և սովորութիւններ, որոնք թէստ անհշան, աննկատելի են, սակայն ուսումնասիրութիւնների համար անհրաժեշտ են, ուստի և որոշեցի ինձ առաջնորդ ընտրել անզուզական Հերբերդ Սպեհնսերի առ այժմ «Institutions c'é-  
tudiantes» ուսութանասիրութիւնը, պատրաստեցի մանրամասն ծրագիր՝ հարցերով և այս նպատակով ճանապարհորդեցի Աղեք-  
սանդրապօլ, Կարս, Կաղզուան, Հին-Նախիջևան, Երեան, Վաղար-  
շապատ և հաւաքեցի բաւականաչափ նիւթ, որը լրացրի Վաս-  
պուրականում ճանապարհորդելիս և Անդրկովկասի գտառներում  
արդէն հաւաքած նիւթի բոված Այս իմ անձնական հաւաքածուի  
վրայ աւելացրի հայ ազգագրութեան և հայ ին մատենագրու-  
թեան մէջ եղած ցրուած նիւթերը և կազմեցի նիւրկայ երկը, ուր  
նիւթերը հայկական են, իսկ ծրագիրը և լուսարանութիւնը ամ-  
բողջովին Հ. Սպեհնսերինը: Մի քանի աեսութիւններ միայն, ո-  
րոնք ինձ համար լիովին ընդունելի չէին թւում, ևս լուսթեամբ  
անցայ: Թանի որ ուսումնասիրութիւններ կատարելու համար  
երբէք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթէ մի քառորդ  
դար էլ անտարբեր գտնու ենք հայկական նիւթերը հաւաքելու շատ  
ու շատ նիւթեր ըոլորվին անհետանալու են, ուստի իմ անմի-  
ջական նպատակը ոչ թէ ուսումնասիրութիւն տալն է, այլ եւ-  
րոպական ուսումնասիրութեան լուսով հայկական նիւթերը որոնել,  
գտնել և կորստից ազատել

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ.

### ԵԿՍԵՐԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ծէս, ծիսական կարդ կոչւում են մարդկանց միմեանց հետ ունեցած ուղղակի յարարիութիւնները և սրանք կազմում են նախնական կառավարութեան ընդհանրացած ձևը. Սրանք ծագում են շատ աւելի վաղ, քան քաղաքական և կրօնական իշխանութիւնները, և այս ապացուցում է նրանով, որ զրանք նախընթաց են ոչ միայն հասարակական, այլ և մարդկային զարգացման. դրանք նկատելի են նաև բարձր կենդանիների մէջ:

Ծունը հարուածից վախենալով սողալով ընկնում է իւր տիրոջ ուսները, որով պարզ ցոյց է տալիս իւր հնազանդութիւնը արսոյայտելու ցանկութիւնը: Ծները զթածութեան այսպիսի միջոցների են դիմում ոչ միայն մարդկանց՝ այլ և իրենց նմանների վերաբերմամբ: Սկունդը մի գամբ տեսնելիս առակումով ընկնում է մէջքին և ոտները բարձրացնում վերև, մինչեւ նա առամիսերը կրծտացնելով յարձակում կը դործէր՝ եթէ յոյս ունենար նրա հետ չափուելու. խեղճ կենդանին ակամայից ընդունում է այն դրութիւնը, որ լինելու էր կոռու մէջ իւր պարտութեան հետեանքը: Պարզ է, որ սէր, անձնուիրութիւն արտայայտող գործողութիւններից զատ հաստատում են նաև այնպիսիներ, որոնք արտայայտում են հնազանդութիւն:

Բոլոր վայրենի ժողովուրդները, որոնց մէջ քաղաքական և կրօնական իշխանութիւնները դեռ ևս սաղմնային դրութեան մէջ են և որոնց մէջ տիրապետում է միայն անձնական զերազանցութեան ոյժը, ենթակայ են բազմաթիւ ծիսական կարգերի: Հայ զիւղացին մինին պատահելիս՝ պարաք է համարում բարենել նրան, մի մեծաւոր անցնելիս՝ ոտքի կանգնել, հիւրասիրութեան միջոցին ողի խմելիս բարեմաղթութիւններ անել դիմելով բոլոր աչքի ընկնող անձնաւորութիւններին առանձին առանձին:

Նկատուած է նաև, որ ծիսական կարգերը նախնական և կիսակիրթ ժողովրդների մէջ շատ աւելի ոյժ ունին, քան այլ իշխանութիւններ: Այսպէս օր, երբ հայ գիւղացին ուզում է ար-

տայայտել և անկարելիք գաղափարը, նա ասում է «աղաթ չէ»:  
Փաւասոս պատմելով Մանուէլի վերադարձը Հայաստան,  
ասում է... իրբե ետես զնա Վաչէն, որ յառաջ էր լեալ նահա-  
պետ, մինչև եկեալ էր ի նա՛ ետ զնա զպատիւ իշխանութեանն  
դոր առեալ էր ի թագաւորէն... քանզի նա էր երէց յազգին և  
Մանուէլն ունէր զնահապետութիւն ազգին անուտէրութեան  
պատուին և Վաչէ լինէր երկրորդ՝<sup>1)</sup> Սրանից հետևում է, որ  
կարգը, ծէսը աւելի մեծ ոյժ ունէր, քան թագաւորի հաստատու-  
թիւնը:

Նոյնը հետեւում է նաև այն հանգամանքից, որ դատապար-  
տում էին Վասակին, իրը աւագութեան իրաւունքը անգուսողի.

Ոչ ըստ կարգի ունէր նա (Վասակ) զտէրութիւնն Սիւնեաց  
աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել  
գօրեղբայր իւր զՎաղինակ և յինքն տարաւ զտէրութիւնն իբրե-  
քրտիքեար յարքունիս՝<sup>2)</sup>, ասում է Եղիշէն:

Նոյն իսկ այժմ հարսանեկան ծէսերին աւելի մեծ նշանա-  
կութիւն են տալիս, քան պսակին, այնպէս որ երիտասարդներին  
առանց հարսանեկան ծէսերի չեն պսակում, ինչպէս այդ անում  
են ամուրիների ժամանակ. և եթէ չհաս է լինում և կամ հոգեսոր  
իշխանութիւնը պսակի հրամանը տալիս մեծ գումար է պահան-  
ջում, կատարում են հարսանեկան ծէսերը և առանց պսակի  
խորհուրդը կատարելու կենակցում:

Ծիսական կարգերը գոյութիւն են ունեցել նախ քան քաղա-  
քական և կրօնական իշխանութիւնների ծագումը, և սա շատ հաս-  
կանալի է, որովհետեւ նախ քան իշխանութեան ծագումը պէտք է  
գոյութիւն ունենար հպատակութեան զզացմունքը, նախ քան  
օրէնքների ծագումը պէտք է ամրապնդուէր մի որոշ ուժի հը-  
պատակելու կարգը, նախ քան կրօնական իշխանութեան ծագումը  
պէտք է տեղի ունենար նսջեցեալի գերեզմանի վրայ, նրա ոգու,  
դուրս առջև կատարուող կարգերը. Պարզ է ուրեմն՝ որ նախ և  
առաջ պահանջուել է հպատակութիւն, իսկ այդ արտայայտող  
գործողութեան ձևերը կազմել են վարքի առաջին եղանակաւո-  
րումը, որը և պահանջուել է ամենայն խստութեամբ Պահանջը  
տիրոջ հրամանը կատարելու, նրան հպատակութիւն ցոյց տալու  
մէջ է կայացել և հէ թէ այս զանցառութիւնից ծագած չարիքի  
վնասուած անձը, ծագած չարիքը չէ որ ուշադրութեան է առնուել,  
այլ պետի հրամանը անգոստելը, նրա հպատակութեան ընդդիմա-

1) Փաւասոս V. 1. 246.

2) Եղիշէ Պատմ. Վարդ. 125.

դրելը. էականը ծէսն է եղել, կարգը և ոչ թէ նրա էռւթիւնը: Վա-  
ղարշակ առաջնի կարգադրութիւնների մեծագոյն մասը կայանում  
է այն ծէսերի մէջ, որ կատարելու էին նախարարները՝ ցոյց  
տալու իրենց հպատակութիւնը: Մելիք-Արովը կախ է տուել Բոլ-  
նիսում Փանոսանց Հայրապետին, որ նրա հարցման թէ ինչո՞ւ է  
փորում իւր այդին՝ պատասխանել էր, թէ քեզ ինչ, իմ այդիս է  
փորում եմ <sup>1)</sup>:

Մինոյն երևոյթն աւելի որոշակի ցոլանում է կրօնական  
իշխանութեան վրայ: Երբ նկատում ենք, որ գերեզմանի մօտ  
տեղի ունեցող ծէսերը, որ յետոյ դարձել են տաճարներում կա-  
տարուղ ծէսեր, սկզբում միայն այնպիսի գործողութիւններ են  
եղել, որոնք կատարուել են բաւարարութիւն տալու երրեմն իւր  
նախնական, երբեմն էլ իդիալական, աստուածային կերպարան-  
քով ներկայացուած ննջեցեալի ոգուն, երբ տեսնում ենք, որ  
զոհաբերութիւններն ու մեծարանքը, մատաղը, արիւնահեղ զո-  
հերը, ծայրատումը, որոնք ծագել են ննջեցեալի ոգուն բաւա-  
րարութիւն տալու, կամ նրան հաճոյք պատճառելու ցանկութիւ-  
նից, աւելի մեծ չափերով կատարուել են այնտեղ, ուր ննջեցեալի  
ոգին աւելի մեծ երկիւղ է ազդել, որ պասը՝ որպէս թագման  
ծէս՝ սկիզբն է տուել կրօնական պասերին, որ ննջեցեալին ուղ-  
ղած գովարանութիւններն ու թափանձանքը դարձել են կրօնա-  
կան փառարանութիւններ և աղօթքներ՝ հասկանալի է լինում,  
թէ ինչու նախնական կրօնը կազմուած է եղել բացառապէս  
գթութիւն հայցող ծէսերից: Ճիշտ է, միքանի ստոր հասարակու-  
թիւնների մէջ, որոնց նմաններն այժմ էլ գոյութիւն ունեն,  
գթութիւն հայցող ձևերից մինն էլ համարուել է հայր կամ զօ-  
րապետ ննջեցեալի տուած պատուէրների կրկնութեան մէջ, որոնց  
միացրել են զղջման մրմունջներ իրենց պատուիրապանցութեան  
վերաբերմամբ, որը և կարելի է նկատել որպէս սաղմ, որից ծա-  
գել են կրօնի երկրորդական, անհրաժեշտ մասը կազմող սուրբ  
պատուիրանները, սակայն և այնպէս՝ որովհետեւ այս էակները,  
որոնց վերապրում են գերբնական յատկութիւններն ու կրքերը, որ  
յետոյ էլ պահպանում են այն ցանկութիւններն ու կրքերը, որ  
արտայայտում էին իրենց կենդանութեան ժամանակ, ուստի կա-  
րելի է եղբակացնել, որ բարոյական օրէնսգրքի այս սաղմը  
սկզբում բռնել է միայն պաշտաման աննշան մասը, զլխաւոր,  
էական մասը կազմել է այն զոհաբերութիւններն ու հնազանցու-  
թեան նշանները, որոնց օգնութեամբ յոյս են տածել զրաւելու  
ոգու կամ Աստծու բարեհաճութիւնը:

1.) Իմ Գանձակի պաւառ. Ա. հ. եր. 40.

Այսպէս՝ հայ ժողովուրդը մի սրբի զուռ գնալիս ոչ թէ աշխատում է մաքրել իւր ներքինը, ուղիղ սրտով և լի հաւատով մօտենալ սրբին, այլ որքան կարելի է շատ մոմ վասել, խաչհամբոյք ձգել, մատաղ կտրել, թաշկինակներ նուիրել, որ մասոնքը կամ աւետարանը նրանց մէջ փաթաթեն, բազմաթիւ ծունը դնել Չեն քաշւում նոյն իսկ կաշառել սրբին մի մատաղ և կամ մի նուէր խոստանալով, որ կատարէ իրենց խնդիրքը և կամ յիշեցնել նրան իրենց տուած նուէրները և պահանջել հատուցում, որի մի լաւ օրինակը գտնում ենք Յովհան Մանդակունու պատմութեան մէջ — նկարազերկով Մմրատ Մամիկոնիանի պատերազմը պարսից դէմ, նա ասում է.

Եւ նոցա ի բլուրն եկալ, և զօրացն Պարսից բազմացեալ ի վերայ Մմրատայ և Վարազայ, և նոցա կրկնեալ ծունը Աստուծոյ յօդնութիւն կոչելով զսր Կարապետն, Յիշեա, ասեն, զերախտիս մեր, և որպէս ի հեռուստ օգնեցեր, ի մօտոյս մի վերջանար ի մէջ Եւ ենաս ի թիկունս օգնականութիւն Աստուծոյ<sup>(1)</sup>):

Հայ ժողովրդի համար պաս պահելը կազմում է հաւատի էական մասը, և սրա համար է, որ Սելիք Արովն ու Սելիք Զումշուր կուռում են միմեանց հետ ոչ թէ այն պատճառով, որ Մեմբր-Զումշուր համոզում է մանմեղական Աղա-Մահմատ-խանին գնալ աւերել քրիստոնեայ Թիֆլիսը, այլ որ նա պաս է ուտում<sup>(2)</sup>: Հայ իշխաններից Վեստ Մարգիս մի կողմից հայրենիքն է մատնել յոյներին, միւս կողմից Խնձրոնից տաճարները կանգնելի եւ եթէ Հայանատանը իլ է վանքերով, այդ նրանից է, որ հայ թագաւորներն ու իշխանները հաւատաց սծ են եղել, որ այսպիսի աստուածային նուիրաբերութիւնները բաւական են իրենց հոգիները փրկելու:

Դարեւ էին հարկաւոր, որ մարգկութիւնը ծէսից դէպի բարոյականը անցնէր, և մովկիսականութիւնն ու քրիստոնէութիւնը մի մի աստիճան հն այդ զարգացման մէջ:

Բ.—Ինկատ առնելով այն սկզբունքը, որ էվոլյուցիայի զանազան արգասիքները մատնում են իրենց ազգակցութիւնը պահպանելով իւրաքանչիւրը այնպիսի գծեր, որոնք պատկանել են նրան, որից բոլորը ծագել են, կարելի է եղրակացնել, որ քաղաքական, կրօնական և հասարակական իշխանութիւնները, ունենալով ընդհանուր, որոշ գծեր, որոնք աւելի հին են քան այս այժմ

1) Յագիան Մանգակունի պատմ. Տարմայ. եր. 40.

2) Եւ Լոյսյեան. Զանձակի-գաւառ. Աւան. եր. 49.

տարբերուող իշխանութիւններն, սրանք բոլորը պէտք է պատկանեն նախնական, ծիսական իշխանութեան, որից իրենք ծագել են: Ուրեմն ծէսերը շատ մեծ հոռորդիւն են ներկայացնում, որովհետև բոլոր, միմեանցից արդէն տարբերուող իշխանութիւնները նրանից գծեր են կը ում:

Այսպէս օր. ընծաներ տալը՝ մինն այն գործողութիւններից, որոնցով արտայայտում է պետին հպատակութիւն: Սա նաև կրօնական ծէս է, որ սկզբում կատարուել է գերեզմանի մօտ, իսկ յետոյ սեղանի առջև, Ամենանախնական ժամանակներում զա իրը միջոց է ծառայել հասարակական յարաբերութիւնների ժամանակ բարեհաճութիւն տրամադրելու Այսպէս և' ողջոյնները.— դրանք բոլորն էլ իրենց բազմազանութեամբ ծառայում են արտայայտելու զանազան աստիճանի յարգանք դէպի աստուածները, դէպի պետերը, և դէպի մասնաւոր անձեր, մի դէպօւմ նրանք հանդիսանում են իրեւ երկրպագութիւն աստծուն՝ տաճարում և կամ պետի կամ օրեղ անձի ոտների առջև, միւս դէպօւմ իրեւ և ծունքադրութիւն կռքերի, կառավարիչների և սրանց ստորագրեալների առջև: Գլուխ բանալը ծառայում է իրը նշան երկրպագութեան, հպատակութեան և յարգանքի: Դիսի խոնարհումը ծառայում է միենոյն երեք նպատակներին էլ:

Միենոյնը կարելի է ասել նաև տիտղոսների վերաբերմամբ. հայր—մի պատուանուն է, որ տրում է թէ աստծուն, թէ միապետին, և թէ որևէ յարգելի անձի, այսպէս և' տէր խօսքը և քատ ուրիշներ: Միենոյն նպատակին ծառայում են նաև խոնարհութիւն ցոյց տուող խօսքերը, իւր տարորութեան և հնազանգութեան արտայայտութեամբ խօսողն աշխատում է շահել և աստուածային շնորհը և' պետի բարեհաճութիւնը՝ և' մասնաւոր անձի հաճութիւնը: Վերջապէս նոյնպիսի իմաստ ունին փառաբանութիւնը կազմում է պաշտաման նշանաւոր մասը: բռնակալ միապետներին դիմում են մեծ շողոքորթութիւնով և ուր հասարակական յարաբերութիւնների մէջ տիրում է ծիսապաշտութիւն՝ մասնաւոր անձերի հետ էլ խօսելիս գործ են ածւում չափազանց մեծ հաճոյախոռութիւններ (compliment).

Ի՞չ քաղաքակրթուած ժողովրդների, ինչպէս և շատ քաղաքակրթուած, սակայն նախնական կազմակերպութիւնը պահպանուած հասարակութիւնների մէջ պետնում ենք և ուրիշ տեսակի ծէսեր, որոնք արտայայտում են հպատակութիւն, ծէսեր, որոնք ընդհանուր են իշխանութեան երեք տեսակին էլ՝ քաղաքական, կրօնական և հասարակական: Մարտիս—պոլիսնեղիների մէջ

առաջին բռնած ձկան և երախայրիքի ընծայարերութիւնը ծառայում է յարգանքի նշան ինչպէս աստուածներին, այնպէս և՝ դօրապետներին, Հայերիս մէջ, նոր ցորենից պատրաստուած առաջին հացերը, որ կոչւում են Հալարի, ուղարկւում են թէ եկեղեցի, թէ տանուտէրին և թէ բարեկամներին: Նոր—Բայազէտի գաւառում առաջին անգամ ձգուած թոռով բռնուած ձկները բաժանուում են աղբատներին, և նուէր ուղարկւում քահանային, տանուտէրին և բարեկամներին:

Այս բոլոր օրինակներից երևում է, որ կրօնական, քաղաքական և հասարակական հպատակութիւնները, որոնք կատարում էին անհատական գործողութիւնները, որոնք կատարում էին անհատական նպատակի համեմելու համար. նրանք յառաջ են եկել անհատական վարմունքից առաջ քան թէ կազմակերպուել են հասարակական կարգերը, որ պիսի քննադատէին այդ վարմունքը: Նրանց, ըստ երևութիւն սիմվոլական ընոյթը հետևանք է այն հանգամանքի, որ նրանց յառաջացնող հանգամանքների փոփոխութիւնից յետոյ էլ նրանք յարատել են:

Ոչմարը, չտեսնելով իւր մօտ կորցրած գառին, մայում է և սկսում հոտոտել իւր մօտ եղած զառները միառ մի, մինչև որ, վերջապէս, հոտից նրանցից մինին համարում է իրենը, այս ժամանակ նրա մայրական զգացմունքը կատարեալ բաւականութիւն է ստանում: Ծորհիւ յաճախակի կրկնութեան, այս հոտի և հաճոյքի մէջ շաղկապումն է յառաջանում, որի ուժով առաջինը վերարտադրում է երկրորդը: Հոտոտելը դառնում է բոլոր դէպերի համար էլ հաճելի, որովհետև նա յառաջ է բերում զիտակցութեան մէջ որդեսիրութեան թոյլ կամ զօրեղ տատիճանի զգացում:

Սրանից հետևում է. քանի որ սիրելի անձին հոտոտելը սկսում է ցոյց տալ սէր դէպի նա, սրա հետևանքը լինում է այն, որ երբ մարդիկ ցանկանում են, որ իրենց սիրէին, և սկսում են բաւականութիւն զգալ երբ արտայայտում են սէր գէպի իրենք, հոտոտելու գործողութիւնը դառնում է յարգանք և սէր արտայայտող ծէս: Սամօսաները բարեւում են քթերը միմինց մօտ դնելով և աչ թէ քսելով, այլ իիստ հոտոտելով, նրանք նաև սեղմում են և հոտոտում ձեռները, մանաւանդ բարձր

մարդկանց. միատեսակ բարևելու ձեւը կան նաև էսկիմոսների և նորզելանդացիների մէջ:

Հայերիս մէջ յաճախ պատառում է սիրած երեխայի գլուխը հոտոտելը, իսկ ննջեցեալի կամ պանդխտի շորերը հոտոտելը միանգամայն ընդհանրացած է:

Որովհետեւ հոտառութեան և ճաշակման մէջ մեծ կատ կայ, այս պատճառով և պէտք է, որ հոտառութեան վրայ հիմնուած գործողութիւնների հետ զուգընթաց տեղի ունենան նաև ճաշակման վրայ հիմնուած գործողութիւնները. և յիրաւի, համբոյրը, որ տալիս են միմեանց աղաւնիները և ընդհանրապէս սիրահարուած թռչունները, ցոյց է տալիս, որ սիրոյ այս զգացումը բաւարարութիւն է ստանում ճաշակի զգացման մէջ:

Շունը արտայայտում է իւր սէրը՝ միզելով սիրածի ձեռք, նոյնը անում է և կովը, լիզելով իւր հորթին. այսպէս ուրեմն և համբոյրը ծագել է միենո՞ն ձեռվի, ինչպէս և սրա նման գործողութիւնները, հետևապէս և համբոյրից, որպէս սիրոյ արտայայտութեան ընտկան նշանից, յառաջանում է և այս համբոյրը, որը արտայայտելով սիրոյ արտաքին նշանները, բաւականութիւն է պատճառում նրան, որին համբուրում են, և սրա շնորհի գրաւում նրա բարեհաճութիւնը դէպի համբուրողը. Այստեղից յառաջանում են ոտ, ձեռք, հանդերձ համբուրելը, որպէս ծէս:

Հայերիս մէջ համբոյրով արտայայտում են նախ սէր, — համբուրում են սիրուած էակի այտերը, ճակատը, շրթունքը, աշքերը, բուկը և պորտը: Հասարակ ժողովրդի մէջ իբր սիրոյ արտայայտութիւն գոյութիւն չունի ձեռք համբուրելու սովոր ինութիւնը:

2). Համբոյրով արտայայտում են յարգանք. — երիտասարդներն ու մանաւանդ հարսերը համբուրում են պառաւների և ծերունիների ձեռքը. յաճախ նոյն իսկ այս դէպօռում, երբ միմեանցից հեռու են գտնուում, կանալք մեկնելով իրենց աջ ձեռքը՝ ասում են. խանում մարիկ, ձեռքտ պակնեմ. Սկեսրայրը և տեղըները հարսի ճակատն են համբուրում, իսկ ոս նրանց ձեռքը: Հոգիորականների ձեռքը համբուրելը, աջը առնելլը, միանգամայն ընդհանրացած է. պատահում է նաև, որ նրանց քղանցքն էլ են համբուրում: Հասակակիցներն ու միենոյն վիճակի անձեր՝ պոռշտի են անում միմեանց հետո:

3) Համբոյրով՝ արտայայտում են պաշտամունք, գլուխումանները, սրբերի մասնաւնքները, սրբերի պատկերները, եկեղեցները համբուրելը սովորական է:

Սասարիկ թալիսանձելիս չոքում համբուրում են մեծաւորի

ոտքը, չորում համբուրում կաթուղիկոսի ձեռքը և երկրպագում սրբերին ու տառուածութեան։ Իսկ հսումը երկրպագել են նաև թագաւորներին. ու խոնարհեցաւ (Մուշեղ Մամիկոնեան) ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եղագ արքայի (Պարսից) և կանգնեցաւ<sup>1)</sup>։

Այս զգացումը, որ ծագում է յուղմունքից և կամ պարզ զգացողութիւնից, յառաջացնում է ջղաձգութիւն, որի ոյժը համեմատական է զգացումի ուժին. միւս զգացումների պէս, սիրոյ զգացումն էլ յառաջացնում է ջղաձգութիւն, որից և ծագում է գրկախանութիւնը. և եթէ խոհականութիւնը չի գալիս մեղմելու այս ջղաձգութիւնը, նա միանդամայն համապատասխանում է զգացման ուժին. եղել են գէպքեր, որ մայրեցը սիրելով իրենց երեխաններին՝ այս աստիճան սեխմել են իրենց կրծքին, որ նրանց սպանել են. Այս բնական զգացումը արտայայտող ձևերը դարձել են ծէս և այժմ մարզիկ միմեանց հանդիպելիս զրկախառնում են, արտայայտելու իրենց մէրը և յարգանքը։

Պատ թագաւորոր լսելով Մուշեղ Մամիկոնեանի բացատրութիւնը նրա մասին կատարելուծ ամբաստանութիւնների վերաբերմամբ՝ «յարուցեալ ի գանոյիցն, բուռն հարկանէր զՄուշեղէ, արկաներ զնովաւ զբրկս<sup>2)</sup>». ասում է Փաւատոս։

Երբեմն այս զգացողութիւնից յառաջացած ջղային շարժումները ուղղուում են որոշ նպասակի, երբեմն էլ յախուռն (անկարգ) ձև են ստանում, սակայն սովորաբար դաշնակաւոր (rhythmicus) են լինում. ձեռքի բոլոր ուժեղ շարժումները նրան այնպիսի դրութեան մէջ են զնովմ, որ բաւական հեշտանում է հակադարձ շարժումը, նախ որովհետեւ մկանունքը, որ յառաջացնում են այս հակադարձ շարժումը զտնուում են որա համար ամենից յարմար գրութեան մէջ, և երկրորդ որովհետեւ նրանք օգտուում են հանդստեան փոքրիկ միջոցով։ Այստեղից յառաջանում է ծափ տալը և կամ ձեռներով մարմնի միւս մասերին խփելը։ Այստեղից էլ յառաջ են դալիս որոշ ծէսեր. այսպէս զոյն հոնակութիւնը արտայայտելու համար ծափ են տալիս, ճկոտացնում են, կոտրատում մատները, չսթացնում, երեխայի յետոյքին են խփում. Միևնույն տեսակի մկանունքների ցնցումներ տարածում են, նաև ոտների մէջ, ուրախութիւնից վեր-վեր են թռչում, ընդպառաջ վագում, պարում են։

Զգացմունքը յուղուելով, ջղաձգութիւն է յառաջ բերում նաև՝ ձայնի ջղերի մէջ։ Ընդհանրապէս ուրախութիւն արտայայտող ձայները, միաժամանակ արտայայտում են և այնպիսի

1) Սերէսո. գլ. Դ. եր. 73.

2) Բիւզ. Ա. գ. Դ. դւ.

ուրախութիւն, որ յառաջանում է սիրելի անձին պատահելիս, և բացի սրանից, ծառայում է արտայայտելու կեղծ ուրախութիւն այն անձի առջև, որի հաճութիւնը կամենում են գրաւելու Ռւստի և սպասուած անձը երևալիմ՝ բղաւում են կեցցէ, Զան, ջմն, հողիտ ուտեմ. Թագաւորը ապրած կենայ, Մելիքի մին օրը հազար:

Արցունքը, որ սովորաբար սաստիկ յուզմունքի արդիւնք լինելով մեծ մասամբ ծանր զգացումների արտայայտիչ են լինում, երբեմն նաև հաճի զգացումներից են յառաջանում, երբ վերջիններս մեծ ուժով են ներգործում: Այս պատճառով և նրանք դառնում են ծէսեր, որպէս յարգանքի, ցաւակցութեան և ուրախութեան արտայայտութիւն:

Պապ թագաւորը իւր սէրը արտայայտելու համար դէպի դօրապետ Մուշեղ Մամիկոնեանը, երբ նա ամբաստանութիւններից արդարացաւ և իւր անձնուիրութիւնն ապացուցեց, նրան գրկեց և «(այր ի վերայ պարանոցին Մուշեղի»<sup>1)</sup>:

Երբ հարսին հօր տանից տանում են՝ մայրը ցաւակցութիւնից լալիս է և երբ հարս ու փեսան պասկից վերադառնում են. փեսացակի տունը, այստեղ ևս վերջինիս մայրը լալիս է, միայն հչ թէ ցաւակցութիւնից, այլ ուրախութիւնից:

Երբ մինը պանդխտութեան է գնում, նրա կինն ու մայրը, ինչպէս և մօտիկները լաց են լինում իրենց ցաւակցութիւնն արտայայտելու, և երբ վերադառնում է՝ դարձեալ լալիս են, այս անգամ իրենց ուրախութիւնը արտայայտելու:

Ննջեցեալների վրայ լաց լինելը այնպիսի մի զօրեղ ծէս է դարձել, որ յառաջ է բերել նոյն իսկ առանձին պաշտօնեաներ՝ ռայն արկու կուսանք սեազգեստա<sup>2)</sup> և ռաշխարող կանայք և սրանց առաջնորդ՝ Մայր ողբոց<sup>3)</sup> իսկ այժմ լալկան կանայք և լալկան մէրք:

Մրմնք լալով նկարագրել են ննջեցեալի բարեմանութիւնները, նրա քաջութիւնն ու առաքինութիւնը, այս աշխարհական ծէսը վերջը դարձել է կրօնական և առաջ է բերել դանձերը, որ նոգմորականները լալագին երգել են և նոյն իսկ այժմ էլ երգում են ննջեցեալների վրայ:

Նոյն իսկ ոմանք արհեստական արցունք բերելու նպատակով ծածուկ աչքերին սխտոր են քսում:

1) Բիւզանդ. Ե. գպր. Դ. դէ.

2) Մովսէս Խորենացի, Ե. գլ ԿՊ.

3) Փաւառա Բիւզանդ. Պ. գար ժն.

Արշակ Բ. թագաւորը իւր եղբօր որդի Գնելին սպանել տալուց յետ՝ իւր ցաւակցութիւնը արտայայտելու նպատակով հրամայեց. ռամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն իսկ ինքն թագաւորն զնացեալ ի լալիսն, նստեալ լայլ զեղորորդին իւր, զոր ինքն եսպան: Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման կոծ մեծ և աշխար զնել շուրջ զսպանելով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն... ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յոզսա արտասուաց յաղիորորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր:

...Եղանակ (Փառանձեմ) մայր ողբոցն և ձայնարկունքն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուազել զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն զնելին, զքսութիւն, զնարս մահու նիւթել, զսպանում, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարրառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ<sup>1)</sup>:

Այս օրինակներին, որոնք բացատրում են թէ ինչպէս զգացման բնական արտայայտութիւնները յառաջացնում են ծէսեր, աւելացնենք միքանի ուրիշներ, պարզելու համար այն միջոցը, որով ծէսերը ծնունդ չառնելով ուղղակի և անմիջապէս ինքնակամ գործողութիւններից՝ այսուամենայնիւ յառաջանում են բնական ճանապարհով և ոչ թէ մտադրուած սիմվոլականութեամբ.

Կարսի հայերի մէջ ողջուն—աղըէր են լինում հետեւեալ կերպ.—Պատարագի միջոցին ողջոյն տալիս «աղբրացող» երկու երիտասարդները իւրաքանչիւրը մի խորանի առջևից գալով սեղանի առաջ միմեանց ողջոյն են տալիս, և ապա գուրս գալիս եկեղեցու գաւիթը, կտրում են իրենց աջ ձեռքերի ճկոյթ մատերը և փոխադարձարար խմում:

Նոյնը կատարում է նաև Զանգեղուրում<sup>2)</sup> և Բորչարում,  
3) նոյն իսկ առանց եկեղեցական ողջունի, այլ լոկ ծակելով իրենց ճկոյթ մատերի ժայրերը և փոխադարձարար ծծելով միմեանց արիւն:

Այս ծէսը, որ գոյութիւն ունի ինչպէս թուրքերի, այնպէս և վայրենի շատ ժողովուրդների մէջ, ինչպէս են Հարաւային Աֆրիկայի և Մադականարի և Բօրնէօի ժողովուրդները՝ բացատրում է հետեւեալ կերպ.—Նախնական մարդը ոչ միայն համարում է որ մի որիէ անձի յատկութիւնները կամ առանձնայա-

1) Բիզանգ անգ.

2) Зелинскій: Народно-юридические обычаи Закавказскихъ армійъ. եր. 6.

3) Եւ լուսական Բորչարուի գուստը. Ազգ. հանգէռ. եր. 289.

կութիւնները յատուկ են նրա բոլոր մասերին, այլ և նա լիովին հաւատացած է, որ քաջ թշնամու արիութիւնը կարելի է ժառանգել՝ լավելով նրա սիրաը, կամ կարելի է ներշնչել իրեն մեռած ազգականի առաքինութիւնը, եթէ մանրէ նրա ուկորները, ջրի հետ խառնէ և խմէ, հետևապէս և՛ հասկանալի է, որ միմեանց արիւնը ծծելով, մարդիկ հաստատում են իրենց մէջ միմնոյն բնութեան իսկական ընդհանրութիւնը:

Մինոյնը կարելի է ասել նաև անունները փոխանակելու վերաբերմամբ Շոշոների մէջ ամենամեծ հաճոյախօսութիւնը որ մի մարդ կարող է մի ուրիշին անել—իւր անունը նրան տալն է: Աւատրայիցիցիները փոխանակում են իրենց անունները կրոպացիների հետ ի նշան իրենց եղբայրական զգացման: Այս սովորութիւնը, որ չափազանց տարածուած է, ծագում է այն հաւատառիքից, որ անունը անհատի մի մասն է: Տիրել մի մարդու անուանը, միևնոյն է թէ տիրել նրա էութեան մի մասին, և այն տալիս է տիրողին իշխանութիւն՝ վնաս հասցնելու այդ անձին. և սրանից յառաջանում է շատ ժողովրդների մէջ տիրող սովորութիւնը՝ խստութեամբ ծածկել անունը: Հետևապէս և՛ փոխանակել անունները՝ նշանակում է մասնակից անել միւսին իւր էութեան, և միևնոյն ժամանակ նրան վստահիլ իշխանութիւն իւր անձի վրայ, որ նշանաւում է փոխադարձ մեծ վստահութիւն:

Հայերիս մէջ միմեանց հետ անուն փոխանակելու սովորութիւնը չի նկատում, միայն ընդհանրացած է սիրած անձի անունը իւր զաւակին տալը, ի նշան յարգանքի և սիրոյ. Նկատուած է նաև որ քաջերի և հերոսների անունները դնում են երեխաների վրայ, յուսալով որ վերջիններս ժառանգեն նրանց բարեմասնութիւնը. օր. Բերուտով, Լազարով, Հայրիկ, Անդրանիկ: Նաև երկրորդ կնոջը տալիս են առաջնի անունը:

Մինոյն կերպ բացատրուում է նաև սիրելի ննջեցեալի անունը նորածնին տալու սովորութիւնը: Անյարմար է համարւում նաև մանկան տուած ննջեցեալի անունը, եթէ վերջինս տան մեծերից է եղել, յաճախ կրկնելը, ուստի և նրան կոչում են այն պատուանունով, որ սովորաբար տալիս էին ննջեցեալին, օր. ջոջ պղա, փաշա, հաճի աղա, հաճի պապ, մեծ-աղա:

Դ.—Միսական կարգերի վրայ առանձին ուշադրութիւն չի քարձուած, որովհետեւ քաղաքական և կրօնական կարգերը հետըշնթէ զարգացնել և ունեցնել են իրենց առանձին պաշտօնեաները, մինչդեռ ծիսական կարգերը այլասեռուել են այն հասարակութիւնների. մէջ, ուր հասարակական երևոյթները դարձել են կըուա-

դատութեան առարկայ, Սկզբում քաղաքական և կրօնական կարգերի կատարողներն էլ միմեանցից շատ չեն տարբերուել, այլ միայն այնքանով, որ առաջինները աշխատել են գթութիւն հայցել կենդանի, իսկ երկրորդները մեռած պետից, որովհետև նախնական ժողովրդների մէջ կենդանի պետին պաշտում էին մեռած պետին հաւասար, և որ կենդանի պետին քրմարի տուած պաշտամունքը այն ծայրայեղ պաշտամունքն է եղել, որ կատարել են նրա բոլոր ծառայողները:

Հայ նա։ապետներն ու թագաւորներն էլ պաշտուել են հայ ժողովրդից թէ իրենց կենդանութեան ժամանակ և թէ մահից յետոյ, Կաղմոս դիմելով Հայկին «մեծդ դիւցանց» է կոչում նրան, որ մահից յետոյ Օրիօն աստեղութիւնն է կազմում, Վահագնը հայ երգիչների խանդավառ սիրոյն է արժանանում, Արշակունիներին աստուածային ծագումն է վերագրում և սրանց արձանները, «որ Վաղարշակ Արմաւրում շինեց իւր նախնիների պատկերով... որոնք բերուած էին Բագարան և յետոյ Արտաշատ, փշրում է Սասանիան Արտաշէլը<sup>1)</sup>: Բագրատունիներին հրէական ծագում վերագրելը նոյն աստուածացման տենչից է յառաջ գալիս, և սովորական սուրբ մակղիբից<sup>2)</sup> զատ նրանց պատկերներն էլ նկարում էին եկեղեցում, ինչպէս այս հաստատում է Յովհաննէս կաթողիկոսի Աշոտ Ա. թագադրութեան նկարագրութիւնից. «Դառնան յեկեղեցին սուրբ, և հայրապետն Գէորգ ընդ նոսս, և անդ աւետարաննեալ ի վերայ զնուոիրական աղօթսն, և ածեալ ի զիծու և ի նկար ու տեսականս զոսկեճամուկ զզեցութիւնսն և հղեալ ի գլուխ զթագ թագաւորութիւնն նորա»:

Նաև հէ միայն քրմապետները, այլ և կաթողիկուները զբաղուել են թագաւորի պաշտաման ծէսերը կազմակերպելով, ինչպէս երկում է Փ. Բիւզանդացու հետեւեալ խօսքերից. Եւ (Ներսէս Մեծ) զվարս թագաւորութեան իսկ յօրինէր ամենաբարի կրօնիւք, որպէս և տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորոքն<sup>3)</sup>:

Այն հասարակական կազմակերպութիւնները, որոնք գեռ քիչ են զանազանակերպուել (*différencie's*) պարզ ցոյց են տալիս կենդանի և մեռած պետերի պաշտաման նոյնութիւնը.— Վայրենի ժողովրդների մէջ սկզբում ինքը, պետը, յայտարարում է իւր քաջութիւնների, իւր նախնիքների մասին, եղիպտական և ասորական արձանագրութիւնները ցոյց են տալիս, որ այս սո-

1) Մովսէս Խորենացի. ք. գլ. հէ.

2) Ալիշան. Այլարատ եր. 418.

3) Փաւառու Բիւզանդացի. ե. զպը. Ա. գլ.

վորութիւնը երկար ժամանակ տևել է. յետոյ, երբ պետք չաւ ճարտասան չէ լինում, յանձնաբարում է ուրիշներին պատմելու. և այսպէս հետզհետէ սովորութիւն է դարձել, որ պետերի. իշխանների առջեկց գնում էին մարդկի, որոնք ներբողում էին նրան և երգելով գովարանում. միենոյնը, ինչոր կատարում է մեռած, աստուածացած պետի վերաբերմամբ:

Թէ հայերիս մէջն էլ այս միենոյնը տեղի է ունեցել՝ երևում է հետեւալ մնացորդներից.

Ազաթանգեղոսը (Յձդ) յիշելով այն իշխանների անունները, որոնց Տրդատը ուղարկեց լուսաւորչի որդիներին բերելու ասում է թէ երրորդ իշխանը «Դատ անուն՝ կարապետ արքայիշ ուրեմն պարզ է, որ հայ թագաւորներն էլ ունեցել են իրենց առջեկց գնացող կարապետ կամ կարապետներ, որոնք ազդարաբել են ժողովրդին թագաւորի մասին»:

Դեռ մինչև այժմ էլ կաթողիկոսի գնացքին կարապետում է մի հոգևորական՝ խաչը ձեռին, և երբ մօտենում է նա եկեղեցուն, նրա առջեկց գնում են հոգևորականներ և երգեցիկ խմբեր՝ շարականներով ներբողելով նրան, միենոյնը, ինչ որ կատարում է մի կրօնական թափորի ժամանակ, երբ մինը խաչվառը ձեռին կարապետում է, և հոգևորականների խումբը շարականներ երգելով առաջնորդում է աստուածութեան պատկերը կամ մի մասունք:

Միենոյնը նկատում ենք նաև հարսանեկան ծէսերի մէջ, երբ թագուորը եկեղեցուց իւր տունն է վերադառնում, մինը, որ աղուէս է կոչւում, վազում է նրա առջեկց ազդարաբելով նրա գալուստը և գովարաննելով նրան ու թագուհուն:



## ԵՐԿՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ.

Յ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ն Ե Ր

Ե. — Ամէն մի յաջողութիւն, ինչ տեսակի և լինէր, ինքնըստինքեան կազմում է ինքնաբաւականութեան տղթիւր, և այն, ինչ որ ցոյց է տալիս այդ՝ գնահատելի է, որովհետև յառաջ է բերում գովասանք, քաջալերութիւն:

Այսպէս՝ նորսիցի Կարապետ Բաղալեան հովիւը դաշտում մի գայլ էր սպանել շալակել բերել էր զիւղ և ցոյց տուել, իսկ հայ որսորդները ցոյց տալու համար իրենց յաջողութիւնը, քաջութիւնը, սպանած եղջիւրները խփում են իրենց տան զըսան վերեւ, իրենց սպանած արջի մորթուց մուշտակ են կարում և հափնում, ամէն տեղ պատմելով, որ իրենց խփածն է:

Աղէքսանդրապոլիցի Աւշի Եղիկը Փամբակի ձորում իւր սպանած վարապի ժանիքները արծաթէ կանթերով կախում էր իւր և իւր ձիու կրծքից<sup>1)</sup>:

Հայկական այն դարձուածքը թէ «ի՞նչ, պողաւոր է», որ զործ է ածւում երր ուղում են յայտնել մինի ոյժը, մեծութիւնը, հաւանօրէն մնացորդ է այն սովորութեան, որ երբեմն նաև հայերը կրել են իրենց ճակատին իրը յաղթանակ իրենց սպանած եղջիւրաւոր կենդանուու եղջիւրը, որը և յետոյ դարձել է քաջութեան, իշխանութեան խորհրդանիշ (սինվոլ), պատկերանալով զօրապետների սպաւարանների վրայ:

Եւ որովհետեւ վայրենի և կիսավայրենի ժողովուրդների մէջ թշնամի մարդիկ աւելի վտանգաւոր են քան թշնամի-կինդանիները, այս պատճառով և տոաջիններին յաղթեն աւելի է փառարանւում քան երկրորդներին, հետեւապէս և այսպիսի յաղթութեան նշաններն աւելի են գնահատում:

Քաջ զինուորը կռուի դաշտից վերադառնալով կարող է մեծարանք սպասել միայն այն դէպքում, երբ իւր քաջազործութեան պատճութիւնը կարող է ասպացուցանել մի շօշափելի ապացոյց, եթէ նա իրը ապացոյց կը բերի իւր սպանած մարդու մի մասը, մանաւանդ այն, որից դիւկի վրայ միայն մի

1) Աղէքսանդրապոլում նիւթեր հաւաքելիս ինձ բանաւոր տեղեկութիւններ տուեց նաև յայտնի ազգազագէտ ու. Ա. Մէկթարեանը, որին և չնորհակալութիւնս եմ յայտնում:

հատ է լինում, այն ժամանակ նրա վարկը ժողովրդի աչքում կը բարձրանայ և նրա իշխանութիւնը կը զօրեղանայ: Պահել յաղթանակները, որպէսզի ամէն մի յարմար դէպքում հնարաւոր լինի պարծիլ նրանով, և այսպիսով զօրեղացնել իւր ազգեցութիւնը, դառնում է սովորութիւն:

Այժմ տեսնենք, թէ այս յաղթանակները ինչ տեսակի են լինում:

Զ.—Սպանուածի մարմնի մասերից ամենից աւելի կը բում են գլուխը, երկի այն պատճառով որ նա ամենից աւելի կարող է անժխտելի ապացոյց ծառայել յաղթութեան:

Փաւատոս Բիւզանդացին նկարագրելով Պատ թագաւորի պատերազմը Պարսից դէմ ասում է:

Մչ գոյր չափ դիմանոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց Մուշեղ: Սոյն պէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն և մեծամեծքն և բոլվանդակ ամենայն զօրքն. և եղեւ մեծ յաղթութիւն յերկրին Հայոց <sup>1)</sup>:

Նոյն Բիւզանդացին պատմելով Աղձնեաց Բակուր բղեշխի Հայոց Խոսրով թագաւորից ապստամբելու մասին, ասում է, որ Հայոց զօրքերը զնացին, յաղթեցին նրան, ևսպանին զրդեաշխն, եղբարբը և որդուքը իւրովք հանդերձ, Բայց աղջիկ մի զրուտը նորածին և զգուռն Բագուր բղեշխին բերին առ արքայ <sup>2)</sup>:

Յովհան Մանդակունու ասելով. Իսկ Նիսորձէս, որ զՈրմիզդ եսպան, զումարեալ զօրս պարսից ութսուն հաղար և եկն ի վերայ Մուշեղայ: (Մուշեղ) բարձեալ զմուրճն ի վեր՝ իջոյց ի վերայ գագաթան Նիխորձիշի, և ուղեղն ցնդեալ ընդ քիթսն իջանէր, Եւ կտրեաց զգուրին և ձգեաց ի մախաղն իւր. և գարձաւ <sup>3)</sup>:

Իշխանն Արծրունեաց ւեկիալ հանդիպեցաւ զի Դիմետը և իշխանն Անգեղ տան մարտնչէին ընդ միմեանս: Եւ նորա ի վերայ յարձակեալ, կտրեաց զաջոյ ուռ նորա և ի վայր ընկէց, և կտրեաց զգուրին նորա և ձգեաց ի մախաղ իւր. և գարձաւ <sup>4)</sup>:

Դաւիթ-բէկի արքաւանքների միջոցին հայերը սոդանել և Միսիթար սպարապետին և նրա զլուխը տարել թուրքաց փաշային:

ԺԹ. գարում Աղէքսանդրապոլի Հայոց ըլ Գող Ղազարին սպանել են, զլուխը կտրել և տարել Կարսի փաշային:

1) Փաւատա Բիւզանդացի. Ե. գար. զ. Դ.

2) Փաւատա Բիւզանդացի. զ. գար. զ. Թ.

3) Յովհան Մանդակունի զ. Ա. եր. 13.

4) Զենոք Գլակ. պատմ. Վենետիկ 1833 թ. եր. 30

եւ որպէսզի այս յաղթանակը աւելի նկատելի լինի, ցցի կամ նիդակի վրայ էին անց կացնում և պատեզնում և կամ հրապառակի մեջ տնկում; և կամ անց էին կացնում սայլի ցցերին, ինչ-պէս հրեւում է հետեւեալ գէպքերից.

Բիւզանդ պատմում է, որ Պապ Թագաւորը իմանալով՝ որ Դղեակ մողպետը ուզում է իրեն մատնել Պարսից Շակուհ թագաւորին, կանչում է նրան իւր մօտ, իւր թէ կամենում է նրան պատգամաւոր ուղարկել Շաղուհի մօտ իւր հպատակութիւնը յայտնելու և սպանել է տալիս, և հատին զգուխ նորա, և հանին հարին ի նիդակի, և կանչնեցին ի հրապարակին արքունի ։)

Փաւստոս պատմելով Մեհրուժան Արծրունու և Մանուէլ Մամիկոնեանի պատերազմերը՝ ասում է, ո՞Չ Մերուժանայ զգութին իրաց հատանէինց... Ապա (կանայք) տեսին զգութին Մերուժանայ, զի զցիցն իրկան կախեալ էր ։)...,

Երբեմն գլխները բերում զնում էին ննջեցեալի գերեզմանի վրայ որպէսզի սրանով արժանանան նրա զթութեան,

Մինոյն իմաստն է ունեցել և այն սովորութիւնը որ Հայոց զինուորները յորդամ զենեալ զլխատէին զախոյիանան առէին, Արշակայ զոհ լիջր ։),

Մինոյն բանը կատարում է նաև սրբերի վերաբերութեամբ, զօնուած աքաղաղների զտուխները զնում են նրա գերեզմանի, ուխտատեղու վրայ: Միայն Շուշու Քարին-տակի զիւղի Շուտոտ Խոչ ուխտատեղում ինքս համարել եմ հարիւրց աւելի պարզագի զլուխներ՝ միմեանց մօտ շարուած:

Եկեղեցու առջև մատղած աքաղաղների զլուխներն ել ձը-գում են նրա կտուրը:

Ե.՝ Երբեմն սպանուածի ամբողջ զլուխը զժուար է լինում տանել ծանրութեան պատճառով, մանաւանդ երբ ճանապարհն էլ հեռու է լինում. այս զէպքում տանում են կամ ճնոտը, կամ ատամները, կամ ականջները և կամ քիթը, այսպէս.

Եւ Սմբատ ասեալ զլորսն, զնաց ի վերայ քաղաքին Պող-պայ ի զիշերի, Եւ մտեալ զօրացն ի տունսն զորս և գտին պարսիկս լիզնուած սպատակէին, և զքիթ մն կարեալ ի շարի ար կան է ին և բերէին առ Սմբատ: Եւ համարեալ զքիթին, զտանէին սպանեալ պարսիկը՝ ընդ այր և ընդ կին և ընդ մանկակը՝ չորեք հազար ։),

1) Փաւստոս Բիւզանդ. Ե. զլ. Զ.

2) Բիւզանդ. Ե. զպր. Խ. զլ.

3) Փաւստոս Բիւզ. Ե. զպր. Ե. զլ.

4) Ապկան Մանղակունի պատմ. Տարօնոյ. Կ. թ. 36

Հայ թրքական ընդհարումների ժամանակ Նախիջեանի գաւառի Շուռութ գիւղի հայերը Ազուլիսից հարս բերելիս ճանապարհին թուրքերը յարձակում են սրանց վրայ, բոլոր տղամարդկանց սպանում և նորահարսին տանում, բռնաբարում և ստիպում թրքանալ և երբ նա չի յօժարանում եռացրած ջրի մէջ կանգնեցնելով սպանում են:

Սրա վրէժը լուծելու համար նոյն դաւառի Գիւմրու գիւղում հաւաքուած հայերը բռնում են այդ գիւղի մոլին, սպանում և նրա ականջները կարում, տանում Շուռութ և Ազուլիս ցոյց տալիս:

Կարսի շրջանում Աղպապա գիւղացի մի թուրք Գոզչեցի Ղազարի հետ միասին, մի քանի ընկերով աւազակութիւն անելիս է եղել: Մի անգամ թուրք աւազակը Աղէքսանդրապօլի մօտերքը մի հայ քահանայի սպանում է, ունեցածը թալանում և տանում իւր ընկերներին ցոյց տալիս երբ հայ աւազակը աւարի մէջ տեսնում է խաչն ու աւետարանը, վրդովւում է, բայց ձայն չի հանում: Մի քիչ յետոյ հեռում նկատում են երկու ձիաւոր. Ղազարն ասում է ընկերներին, դուք սպասեցէք, ես զնամ տեսնեմ ձվեր են դրանք, գամ: Գնում տեսնում է, որ մի ախունդ է իւր ծառայի հետ. անմիջապէս յարձակում է սրանց վրայ, երկուսին էլ սպանում, ախունդի ականջներն ու քիթը կտրում, լցնում նրա ապարոշի (սարըխի, գլխի փաթաթան) մէջ և նրանց ունեցած իւրերի հետ բերում աւազակների մօտ և ցոյց տալիս: Ընկերները նեղանում են վերան, թէ ինչի՞ ախունդին սպանեց, նա էլ պատասխանում է, թէ ինչժւ այն միւս ընկերն էլ քահանային սպանեց:

Միևնոյնը պատմում է և հեքեաթների մէջ. Դաւիթ Խինգանասուն (յիսուն) ջանը մէկ մէկ թալեց բերդի էն եանը (կողմը) ցխեց (սպանեց), մնաց եռառն ջանը, տասի էլ մէ թէ կըտրեց, մէկ մէկ թողեց, տասի էլ մէկ յաջը խանեց, մէկ թողեց<sup>1)</sup>:

Բ.—Մարդակերութեան շրջանում իրը յաղթանակ գործ է ածուել նաև սպանուածի մորթին, որ սպանողը հագել է և այդպէս ծառայել պատերազմի աստծուն. Խկատանում պարտութիւն կրածների դիակները ձգում էին գետնին, կոխկրտում, յետոյ քերթում, քըմերը զգեստաւորուում էին այդ մորթիներով և պարում, իսկ մարմինները վառում էին տաճարի գաւթում: Այս սովորութիւնը հետզհետ փոխուել է և փոխանակ մարդկանց հազնելու՝ սկսել են խոտով լցնել և ի ցոյց դնել: Այսպիսի գէպքերի

1) Ե. Լալայեան Ստանայ ծաեր Ազգ, Հանդ. XIII գ. եր. 62

մասին բաւականաչափ յիշատակութիւններ կան մեր մատենագիր-ների մէջ,

«Իսկ Մուշեղ, գօրավարն Հայաստանեայց, ասում է Փաւատոս, շրջէր ընդ երկիրն և աւերէր զատրուշանս մազդեզանցն, իսկ զմազդեզունսն որ մի անգամ ի բուռն անկան՝ զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել և զբազում պատուաւոր տեարս, որ պատուականք էին առաջի թագաւորին պարսից՝ ունէր ձերբակալս՝ և տայր մորթել եւ լնով խոտով եւ կանգնել ի վերայ պարսպացն... ընդ բազում տեղիս զայս առնէր (Մուշեղ) ի վրէժմ հօրն իւրոյ ՝<sup>1)</sup>»:

Մի ուրիշ տեղ էլ Փաւատոսը պատմում է թէ այդպէս խոռով լցնելուց յետ հրամայում է «կանգնել ՚ի վերայ պարսպացն ՝<sup>2)</sup>»:

Մինոյն սովորութիւնը գոյութիւն է ունեցել նաև Պարսկաստանում, որովհետև Պարսից Շապուհ թագաւորը նոյնպէս և այս հրաման մորթել զգօրավարն Հայոց Վասակ և զմորթն հանել և լնով խոտով և տանել ընդ նոյն բերդ յԸնդմշն, որ Անյուշն կոչեն ՝<sup>3)</sup>:

Ժամանակի ընթացքում նկատուել է որ իբր յաղթանակ կարք չկայ ամբողջ մորթին քերթել, բաւական է միայն գանզը մաշկել, ականջներից վերև, մազերի հետ միասին, Այս սովորութիւնը սաստիկ տարածուած է հիւսիսային Ամերիկայի հնդիկների մէջ, Հայերի մէջ ևս ըստ երեսութիւն այս սովորութիւնը տեղի է ունեցել, որովհետև սրա մնացորդ կարելի է համարել այն, որ Հայերը սովորութիւն են ունեցել սափերու գլխի մէջ տեղը կը ձևով, ճիշտ այնտեղ, որտեղ սկզբում մաշկելիս են եղել. և այս հաստատում է թէ ձեռագրների մանրանկարներից և թէ Բիւզանդի հնամեալ վկայութիւնից:

«Եւ էր նա (Արտաւազզ, որդի Վաչէի) ի տիոց տղայ. և ըստ մանկութեան օրինի, ըստ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ դղլուխ մանկոյն սոյնպէս ի ժամանակին զերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւալգայ և ցցունս էր թողեալ և գէս արձակեալ»:

Այս տեսակ, այսինքն գագաթի կենտրոնը ածելելու սովորութիւնը գոյութիւն է ունեցել և Աղէքսանդրապօլում մի կէս դար առաջ, և կոչուել է տպիսու վրէն կալ թունելը, որովհետև կալի նմանութեամբ կը ը, իբրև տեղ էր գոյանում:

Մազերը իբր յաղթանակ պահելու սովորութիւնը շատ քիչ.

1) Փաւատոս Բիւզանդցի Ե. գլ. Ա.

2) Բիւզանդ Ե. դպր. Ա. գլ.

3) Փաւատոս. Դ. դպր. Եղ. 91.

է տարածուած, որովհետեւ մի ժարդու գլուխը կարող է մի քանիշ մարդու գլխի մազերի յաղթանակ ծառայել, սակայն և այնպէս դրանք են ծառայել են իրրնշան յաղթութեան, այսպէս մի նագասի վահանը ծածկուած է եղել նրա սպանած թշնամիների մաս դերով, Մի մանդանացի զօրապետի շրջազգեստի ծոփերը կարուած են եղել ծամերից, որ նա ինքը կտրել է իւր թշնամիների գլխներից:

Թ.—Մարմնի մասերից ձեռքերն ու ոտքերն էլ բաւական յարմար են նկատուել տանելու իրը յաղթանակը և Մերսիո կայի ժողովուրդների մէջ սովորութիւն է եղել կտրել սպանուածների մի մի ձեռք և ապա պարել այս յաղթանակների շուրջը կալիֆորնիայի Տնդիկներն էլ սովորութիւն են ունեցել կտրել սպանուածի ձեռքը կամ ոտքը Պարզ է, որ ամէն մի ժողովրդի մէջ ընդունուած է եղել աջ կամ ձախ ձեռքը կամ ոտքը համարել յաղթանակը, որպէսզի միևնույն տեսակից երկու յաղթանակ կառ ըելի չկտրել:

Ո՞չ միայն վայրենիների, այլև հրէաների մէջ իրը յաղթանակ ծառայել է նաև սպանուածների ֆալիւսը (առնանդամը)։ Աստուածաշնչի մէջ պատմում է, «Եւ ասէ Սաւուզ, այսողէն ասասիք ցԴաւիթ, եթէ հչ կամի արքայ վարձանս, այլ հարիւր անթլպատութիւն այլազգեաց, առնուլ վրէժ ի թշնամիաց արքայի»., Եւ.., Դաւիթ ենար յայլազգեացն այն հարիւր և երեք զանթլպատութիւնս նոցա և ելից զնուա առաջի արքայի՝ ։

Միևնույնը տեղի է ունեցել և հայերիս մէջ, ինչպէս երկում է Յովիան Մանդակունու հետեւեալ վկայութիւնից Օձ քաղաքում կոտորած զինուորների վերաբերմամբ.

Եւ հրամայեաց (Պայլ Վահան) զամենեցուն զքիթըն կտրել և զթլիատոն, և արկանել ի մաղախ ։)

Մի այլ տեղ նոյն Մանդակունին ասում է. «Եւ նորա (Պայլ Վահանայ) ձգեալ ձեռն իւր ի սուրն՝ որ առաջի կայր, կտրեաց զթլպատն նորա (Միհրանայ զօրավարին Պարսից) և ետ ի բերան նորա ։).

Հայերիս մէջ նոյնանման դէպքեր տեղի են ունենում նոյն իսկ այժմ. Դարսայ շրջանի Գեատիկ-սաթլմիշ զիւղի մօտ հայ յեղափոխականներն սպանել են կոստի կոչուած մատնիշին, Փալ իւրաը կտրել, բերանը գրել, ապա տարել ցոյց տուել.

1) Ա. Թագաւորաց XVIII 25, 27,

2) Յովիան Մանդակունի Պատմ. Տարօնոյ եր. 23 նահ 24

3) Յովի. Մանդ. եր. 25

Աղէքսանդրապօլի Արխմալի գիւղի մօտ աւազակները սպանել էին երեք զիւղացի և նրանց ֆալիւսը կտրել, վայր էին ձգել Այս դարձուածքը, որ հասարակ ժողովրդի մէջ գործ է ածուում երբ յօխորատում են մինի դէմ ասելով. «Ի՞նչ պիտի էնէ, Փալիւս պիտի կտրէ», արդէն ցոյց է տալիս, որ այս սովորութիւնը տեղի է ունեցել և մեր մէջ,

Ժ. — Յաղթանակներ վերցնելու անմիջական շարժակիթից զատ կայ նաև մի ուրիշ կողմանակի շարժակիթ, որ ամենայն հաւանականութեամբ մեծապէս նպաստում է այս սովորութեան զարդացման նախնական մարզը կարծում է որ իրի յառկութիւնը հաւանարապէս տարածում է բոոր մասերի մէջ, և իւր այս կարծիքը վերագրում է և մարդուն Այսեղից ծագում է մեռած ազգականների մարմնի մասերը ուտելու, նրանց ոսկորները ջրի մէջ լուծած խմելու սովորութիւնը՝ նրանց առաքինութիւնները ժառանգելու նպատակով. սպանուած քաջի արիւնը խմել և կամ սիրտը ուտել, որպէսզի ճեռք բերուի նրա քաջութիւնը, կամ նրա աչքը կուլ տալ, որ աւելի հեռուն տեսնի, զգուշանալ միքանի վախկու կենդանիների միսն ուտելուց, որպէսզի չվարակուի նրա թուլամորթութեամբ:

Այս կետերի վերաբերմամբ գտնում ենք հայերիս մէջ հետևեալ գէպքերը և մնօտիալաշտական մնացորդները.

Հայ թրբական ընդհարութիւնների ժամանակ հայերը վերցընել էին Զանգեզուրի գաւառի Սիսիսան ընրդը և թուրքերին կոտորել: Հայերից մինը՝ Գէորգ, դաշոյնով խփել է թուրքերի առաջնորդի կրծքին, որ հոչակուած է եղել որպէս քաջ մարտիկ, և բուռք բռնելով հսոսդ արեան տակ՝ խմել է:

Սպանուած մարդու սեղանատամը ջրումը սրելով ջուրը խմեցնում են վախեցածին, որպէսզի ատամի տիրոջ քաջութիւնը փոխանցուի վախեցածին և սա այլև չվախենայ:

Հայոց Արշակ Բ. ժամանակ հայ-պարսկական պատերազմ-ների միջցին պարսկիները Ասի ամրոցում հայ Արշակունի թագաւորների գերեզմանները բանալով, «իսաղացուցանէին ի գերութեան զոսկերս թագաւորացն», սակայն հայերը աւելի մեծ եւանդով պատերազմելով «թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց», զոր պարսիկը խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեան ըստ օրինացն՝ թէ վասն այսորիկ բարձեալ տանեմք զոսկերս թագաւորացն Հայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտքն և քաջութիւն աշխարհիս աստի զնացեալ

ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցին։ Ապա... զոսկերս թագաւորացն Հայոց... հանեալ թաղեցին յամուր ի գիւղն որ Աղձքն անուանին, որ կայն ի խինձս ի գուս ի ծոցս յանձուկս ի գժուարս լերինն մեծի։ զոր Արագածն կոչեն՝<sup>1)</sup>։

Գանձակի հայերը ննջեցեալի կրծքին մի հաց են դնում, որը յետոյ չորս կտոր անելով տալիս են ուտելու այն անձերին, որոնք ցանկանում են սրտապինդ լինել և ննջեցեալից չվախենալ՝<sup>2)</sup>։

Եթէ երեխան վատառողջ է, գողանում են մի քաջառողջ մանուկի շորեր, և նրանով բալուկում նրան, որ լաւանայ՝<sup>3)</sup>։

Հաւի սիրտը հում կուլ են տալիս՝ որ սրտոտ դառնան։<sup>4)</sup>

Աղաւնու սիրտ են ուտում, որ բարի լինին։

Թշնամիների որդիներին իշխ ուղեղ են ուտեցնում, որ յիմարանան։

Վախեցածներին արջի լեղի են խմացնում, որ սրտապընդուին՝<sup>5)</sup>։

Մորթած հաւի քուրնիթները (փորում եղած հաւկիթները) անպսակները չեն ուտում, որպէսզի հարսանիքի գիշերը չըեղնին՝<sup>6)</sup>։

Տան մեծը մեռնելիս ոտը լուանում, ջուրն ածում են սընվացքը, որ տան բարագաթը մնայ՝<sup>7)</sup>։

Զաւախքում զերդաստանի ծիրացած պետը իւր իշխանութիւնը յաջորդին յանձնելիս՝ լուանում է իւր ձեռները նրա ձեռների վրայ, որպէսզի իւր ձեռների բարագաթը անցնի նրա ձեռներին՝<sup>8)</sup>։

Ոգին մարմնի բոլոր մասերի մէջ հաւասարապէս տարածուած լինելու մասին հաւատքից ծագում է և հետեւալ եղակացութիւնը. Եթէ մենք տիրում ենք որևէ անձի մարմնի մի որոշ մասին, այսպիսով մենք տիրում ենք և նրա ոգու մինոյն մասին, հետևապէս և իշխանութիւն ենք ստանում նրա ոգու վրայ Այստեղից հետեւում է, որ եթէ մենք մաս հասցնենք զիսկի մի որևէ մասին, այս մասը կզգայ ոգու դրան համապատասխանող մասը, հետևապէս և կարելի է տանջել ոգին, վատ վարուելով մեռելի մասունքների հետ։ Այստեղից ծագում է կախարդութիւնը,

1) Փ. Բիւղանդ. Դ. գող. դլ. Բ. Դ.

2) Իմ Գանձակի գաւար Բ. Հ. ել 93.

3) Զաւախք. Աղդ. Հանդէս. Ա. գ. եր 274

4) Իմ Վարանդա, Աղդ. Հանդ. Բ. եր. 242

5) Իմ Վարանդա, Աղդ. Հանդ. Բ. գիրք եր. 244

6) Իմ Զաւախքը. Աղդ. Հանդէս. Ա. եր. 358

7) Իմ Զաւախքը-2 Աղդ. Հանդ. Ա. գ. եր 316

8) Ե. Լալայեան. Զաւախք. Աղդ. Հանդէս. Ա. գիրք եր 290

այստեղից յառաջանում է այն սովորութիւնը, որ շատ ընդհան-  
րացած է նախնական կախարդների մէջ՝ ազմուկ բարձրացնել  
մեռելի ոսկորները միմնանց բաղիսելով. այստեղից է մեռելների  
ոսկորի «փոշին», որ գործ են ածում Պերուի կախարդները, այս-  
տեղից է այն սովորութիւնը, որ մեր կախարդներն էլ գործ էին  
ածում զիակի մասերը, զանազան յուռութներ կազմելու

Դանձակի հայերը երբ տեսնում են, որ մինի սեռնելուց յե-  
տոյ միննոյն տտնից ուրիշներ էլ են մեռնում, հաւատում են, և  
նոյն իսկ երազում տեսնում, որ այդ մեռելի ոգին գալիս տա-  
նում է միւսներին էլ և սրա առաջն առնելու համար՝ մի քառա-  
սում տարի առաջ այսպիսի մեռելին հանում էին գերեզմանից,  
մի քանի անգամ հրացան արձակում վերան, քաշ տալիս այս ու  
այն կողմ և նորից թաղում, իսկ մի տաս տարի առաջ, բաց էին  
անում գերեզմանը և մեռելի սիրտը հանում, զնում գերեզմանի  
վրայ վառում, մի կուր էլ բերում տուն՝ մանրում, լցնում ջրի  
մէջ և խմեցնում հիւանդացողներին <sup>1)</sup>:

Այսպէս ուրեմն յաղթանակները բացի թշնամու վրայ տա-  
րած յաղթութիւնը ցոյց տալուց, ծառայում են նաև իրը միջոց  
ստորագրելու սպանուած թշնամու ոգին եւ որ, գոնէ մի քանի  
գէպքերում, ոգուն տիրելը ենթադրում է նաև թշնամուն ստրոկ  
դարձնելու հնարաւորութիւն, ապացուցում է շատ զօրել փաս-  
տերով: Ամեն տեղ տիրում է այն հաւատքը, որ ննջեցեալի գե-  
րեզմանի վրայ սպանուած մարդկանց և կենդանիների կրկնակները  
ուղեկցում են այս ննջեցեալի կրկնակներին և ծառայում են նրան  
հանդերձեալ կեանքում: Այս հաւատը միտեղ պատճառ է լինում  
կանանց սպանման, որպէսզի նրանք հանդերձեալ կեանքում կա-  
ռավարեն ննջեցեալի տունը. այսպէս՝ Մովսէս Խորենացին  
խօսելով ՆերսէսՄեծի բարեկարգութիւնների մասին, ասում է.  
Եւ նախարարների ազգերից վերցրեց այս երկու բանը՝ մերձա-  
ւորների ինսամութիւնը... և միւսը, որ մեռածների վրայ սպա-  
նութիւններ էին անում հեթանոսական սովորութեամբ <sup>2)</sup>:

Նոյն հաւատը մի այլ տեղ ստիպում է զոհել ննջեցեալի  
ձիերը, որոնց նա կարիք ունի հանդերձեալ աշխարհի ճանապար-  
հուրդութեան միջոցին, ինչպէս տեսնում ենք Անդրկովկասում կա-  
ռարուած պեղումների ժամանակ, և որի մնացորդը կարելի է  
համարել այն, որ այժմ ննջեցեալի յետեկից տանում են մինչև  
գերեզմանսատուն՝ նրա ձին, միայն հակառակ թամբած:

Բուլանըխում «եթէ մեռնողն անդրանիկ մէկն է, կամ հա-

1) Ս. Լուսեան. Դանձակի գաւառ. Բ. հ. եր. 87—88.

2) Մ. Խոր. գը. Պ. դը. Բարզմ. Ստեփանէի

բարի միակ զաւակը նրա ձին զարդարած մեռնողի ընտիր հապուսաներն ու զէնքերը և զլիսու քօլոկը ձիու վրայ դրած առջևից կը քաշեն<sup>1)</sup>։

Նաև Սասունի և Տիգրանակերտի գաւառներում եթէ ննջեցած անդրանիկ զաւակ է, յուղարկաւորութեան մի ձի ևն զարդարում, և մեռնողի հագուստն ու զէնքերը ձիու վրայ քաշ ձգում<sup>2)</sup>։

ԺԱ. — Նախնական և կիսակերթ ժողովուրդները թշնամին յանցաւորից չեն կարողանում տարբերել և դրածելով ըոպէական արամադրութեան տակ՝ նրանք իրենց ամենամօտիկ յանցաւորի հետ ևս նոյնպիսի խստութեամբ են վարում և յաղթանակ վերցնում ինչպէս և թշնամիների հետ։ Այսպէս Աղէքսանդրապօլում Մարգրենց Պետրոսին պատահմամբ սպանեց իւր փեսայ Կարապետը, Պետրոսի փոքր եղբայր Յովհաննէսը 15 տարի սպանեց, մինչև որ Կարապետի որդի Միմոնը մեծացաւ և այն ժամանակ սպանեց նրան և արիւնը խմեց։

Կարաբարեցի Ղազարը հայ-թրքական ընդհարումների միջոցին յարդ է ծախել մի թուրքի, դաշնակցական խմբապետը այնպէս սաստկութեամբ ծեծել է նրան, որ սեռել է Ելինի հերս, կտրէ զլոխ, իջնի հերս՝ չդանի զլոխ, ասում է հայկական առածը։

### ԵՐԲՈՐԴ ԳԼՈՒԽԸ.

#### Մ Ա Յ Ի Ս Ո Ւ Խ Ն

ԺԲ. — Մեռածի մարմին մասերը կտրել տանելու սովորութիւնից ծագել է կիսնդանի մարդկանց մարմինց մասեր կտրելու սովորութիւնը, երբ նախնական մարդը փոքր ինչ քաղաքակրթութելով նկատել է, որ աւելի շահաւէտ է պահել և շահագործել պարտուած թշնամուն, քան թէ սպանել նրան և միսն ուտելի մտածել է այնուամենայնիւ իւր յաղթանակները կտրել նրանից, միայն այնպէս, որ վերջինս չմեռնի, և ահա այսոտեղից ծագել է ծայրատումը (utilization, ιευθέανειο) իբր յաղթանակ յաղթողին, և ստրութեան նշանակ յաղթուածի համար, Վերջի վերջոյ իւր մարմին մասերի ինքնակամ մատուցումն սկսել է ծառայել իրը հպատակութեան արտայայտութիւն և դարձել զթութեան ծէս։ Այժմ նշանակենք ծայրատման զանազան ձևերը և այն դերը, որ նրանք կատարել են և կատարում են քաղաքական, կրօնական և հասարակական կառավարութիւնների մէջ։

1) Բուլանըի։ Ազգ՝ Հանգէս։ Գ. է։

2) Սրուանձտեան Մանամայ

ԺԴ. — Յաղթուած թշնամու ձեռքը իրը յաղթանակ կտրելով՝ նրա արժէքը իրը ստրուկ աշխատաւորի ձգում էին, ուստի և մկնել են նոյն նպատակով կտրել միայն մատը, և այն էլ այն, որը ամենից քիչ է գործածուում աշխատելիս; այն է՝ ճկոյթը, յիտոյ նաև որա փոխարէն՝ ոտի մատը,

Այսպէս Աստուածաշնչի մէջ կարդում ենք<sup>1)</sup>. «Եւ փախեաւ Աղոներեղեկ, և պնդեցան զնեստ նորա, և հասին նմա. և կտրեցին զծայրս ձեռաց նորա և զծայրս ոտից նորա; Եւ ասէ Աղոնիբեղեկ. և թանասուն թագաւորք ծայրակտուրք ձեռօք և ոտիւք էինյ որ քաղէին զվշրանս ի ներքոյ սեղանոյ իմոյ. արդ՝ որպէս արարի, նոյնպէս հատույց ինձ Աստուած»:

Միենոյն սովորութիւնը եղել է և Հայոց մէջ, որի մէկ վկայութիւնը գտնում ենք Ցովհան Մանդակունու Տարօնոյ պատմութեան մէջ, ուր ասուած է.

Եւ բարկացեալ Վաղդեան, ետ ածել զհամամ, ծայրատել զուս եւ ծեռու նորա<sup>2)</sup>:

Հատ ժողովրդների մէջ տարածուած է ննջեցեալի զթութիւնը հայցել կտրելով մատը կամ նրա մի մասը, այսպէս Զարրուամների մէջ կերպաստանի զլուխը վախճանուելիս նրա շաղջիկները այրին և ամսունացած քոյրերը պարտաւոր են կտրելու իրենց մատներից մի մի յօդ, և այս ծայրատումը նրանք սպարաւոր են կատարել ամէն անզգամ, երբ մեռնում է այդ բարձր պաշտօնը գրաւողը, և միշտ սկսում են ճկոյթից. Մանկանների մէջ ազդականի մահուան առիթով ցաւակցութիւն արտայայտելու սովորական ձեզ կայանում է ճկոյթ, երբեմն և միւս մատների երկու յօդը կտրելու մէջ. կտրուած մատը մեռած ազդականի կամ զօրապեսի ոգուն նուիրաբերելու սովորութիւնը երբեմն զամանում է մեծ ոգուն, աստուածութեան զոհաբերելու ծէս. այսպէս մանկանները զինուորը գառնալիս կատառում են հետևեալ ծէսը. երիտասարդը բարձրացնում է ձախ ձեռի ճկոյթը և մեծ ոգուն ուղղած մի կարճ ներբռդականով արտայայտում է իւր պատրաստականութիւնը զոհ բերելու նրան իւր այդ մատը: ապա կնում է գոմէշի չորացրած կաշու վրայ, ուզ մի եւրիշ զինուոր տապարի հարաւածով կտրում է: Ցոնկային ընտկիչները իրենց հիւանդ մի նշանաւոր ազգականի համար աստուածներից առողջութիւն հայցելիս կտրում են իրենց ճկոյթ ժամանել և զօհ բերելու նրան:

Հաւանօթէն այս սովորութեան մնացորդն է, որ հայերին

1) Քիրը Դատաւերաց 1, 63 7.

2) Ցովհ. Մանդ. պատմ. Տարօնոյ եր. 37

մէջ, մինը հիւանդանալիս երկաթից ձեռք, ոտք են շինում և տանում դնում ուխտատեղում:

Երբ երեխան չի կարողանում ոտքի կանգնել, նրա ոտներին կանաչ և կարմիր թելեր են կապում և մի շաբաթ երեկոյ կանգնացնելով նրան գուան սեմի վրայ՝ մի աղջկայ կտրել են տալիս, իբր թէ նրա ոտները զոհաբերում են Աստծուն:

**ԺԴ.** Սպանուած թշնամու քիթը և ականջները իբր յաղթանակ կտրելու սովորութիւնը տարածուել է նաև գերիների վրայ, որոնց դարձրել են սարուկ, և այսուհետև ստրկական վիճակի նշան համարուել են կտրուած քիթն ու ականջը. Սակայն մի առ ժամանակից յետոյ փոխանակ կտրելու, բաւականացնել են միայն ծակելով, և երբեմն սրանց միջով օղակ են անցկացրել և թող կապելով քաշել իրենց յաղթական կառքի յետերից, ինչպէս այդ ներկայացուած է ասորական քանդակների մէջ, և ինչպէս այդ կատարում էր հրէաների մէջ. եթէ վեց տարի ծառայելուց յետոյ գնուած ստրուկը կը հրաժարուի իբր աղատ հեռանալու, թող տարցի զնա տէրն իւր յտաեան Աստուծոյ, և ապա մատուցէ զնա առ սեամս դրանն և ծակեսցէ զունկն նորա հերամք և ծառայեսցէ նմա յաւիտեան, ասուած է Աստուածաշնչում<sup>1)</sup>:

Հաւանական է, որ ականջներ ու քիթ ծակելն ու իբր զարդ ող և խզմա անցկացնելը յառաջ են եկել այս նախնական սովորութիւնից, որով ապացուցում էր իրենց հպատակութիւնը, պատկանելութիւնը, մանաւանդ որ հէնց այժմ էլ, հայերիս մէջ երբ խոստանում են մի ոչխար կամ գառ մատաղ անել մի սրբի, նրա ականջը ծակում են և կամ փոքր ինչ ճեղքում:

**ԺԵ.** Ծնօտը իբր յաղթանակ թշնամիներից վերցնելլ միանգամայն անհնար էր՝ եթէ ցանկանում էին, որ վերջինս կենդանի մնար և ծառայէր իրենց իրբես ստրուկ, սակայն մի քանի ատամ հանելը վտանգ չէր ներկայացնում, ուստի և ատամներն սկսել են իբր յաղթանակ ծառայել և ամէն մի յաղթող պարտք է համարել իրեն կտրելու պարտուածի մի քանի ատամը, ի նշան նրա ստրկական վիճակի, և այսպէս ծէս է դարձել, որ պարտութիւն կրողները ի նշան իրենց հպատակութեան, ինքնակամ հանեն իրենց մի քանի ատամները և ներկայացնեն իրենց յաղթողին. Պերուացիների մէջ աւանդութիւն կայ, թէ իրենց յաղթող դուայանս կը կարապակը, վրովվուած նրանց անհնագանգութիւնից, որոնք է հրատարակել, որով հրամայել է սրանց և իրենց սե-

1) Քիրք Ելից. XXI. Տ. 6.

րունդներին՝ երեքական ատամ հանել ամէն մի ծնօտից, Իսկ Աւարդիայի և Ավրիկայի վայրենիների մէջ իբր կրօնական ծէս՝ արրունքի համարելիս պէտք է հանել մի քանի ատամ և զոհաբերել աստուածներին,

Հայերին մէջ ևս, հեքիաթներում պատմում են թէ ինչպէս հերոսը հանում է պարտութիւն կրողի ատամները և շարում նրա ճակատին.

Դաւիթը Դոգրէկին վեկալեց ձիան խետ տփեց գետինը, սուը գոեց փորինը, մէ ձեռնով բերանը ճխտեց բացեց, լեզուն քաշեց քոքահան արաւ, ատամներ քաշեց շարեց ճակատը<sup>1)</sup>...

Իսկ ընկած ատամը եկեղեցու սեան մէջ, թոնրի սնկուածքում, ուխտատեղիներում զնելու այժմեան սովորութիւնը կարելի է համարել վերոյիշեալ կրօնական ծէսի մնացորդ:

**Ժ. 2.** —Որովհետեւ պարտութիւն կրած թշնամիներին փոխանակ ուտելու ստրկացնելը մեղմել է յաղթանակներ առնելու սովորութիւնը, քանի որ ինքը, կենդանի գերին արդէն իսկ ծառայում է միշտ իր նշան յաղթութեան, և յաղթանակներն սկսել են առնել այնպէս, որ վասնդի չենթարկեն պարտուածների կեանքը. և բացի սրանից ձգտել են ծայրատումն այնպէս կատարել, որ բոլորովին չպակասի պարտուածի օգտակարութիւնը, և բանի որ զասակարգերի ծագմամբ ստրկութեան մէջ ծնուած զերու կրած նշանը այլ ևս չի ցոյց տուել նրա պատերազմում բռնուած լինելը, հետեւալիս և՛ այլես չի արտայայտել տիրոջ յաղթութիւնը նրա վրայ, ուստի և՛ այլես կարիք չի զգացուել, որ ստրկութեան նշանը խփուէր ծանը ծայրատման միջոցով: Այստեղից յառաջացել է այն, որ ամենից շատ տարածուել է այն ծայրատումը, որ ամենից քիչ վասակար և ամենից քիչ ծանը է եղել եւ այս է պատճառը՝ որ մագեր կտրելը գարձել է ծայրատման ամենատարածուած ձեր:

Բաւական հիմունք կայ ենթաղելու, որ յաղթուած գերիների մագերը կտրելու սովորութիւնը ծագել է սպանուած թշնամիների գանգերը մաշկելու սովորութեան հետ միաժամանակ, և որ մագերի մի մասը կտրելը և կամ նրանց մատուցումը նախ գթութիւն հայցելու և ազա որոշ անձի իշխանութեան ենթարկ կուիլը արտայայտելու նպատակով համապատասխանում է գանգը մաշկելու սովորութեան: Սրան ապացոյց կարող է ծառայել այն, որ երբ թաթարները նուաճել են Զինաստանը, հրամայել են «Հինա-

1) Եւ Լուայեան Ստամոյ ծռեր. Ազգ. հանգ. Պ. XIII հր. 60.

ցիներին ընդունել թաթարական ազգային սովորութիւնը՝ սափրեկ գլխի առաջին մասը, իսկ յետեկ մազերից հիւսել երկար ժամ, ի նշան հպատակութեանց:

Կարծէք միւսոյն սովորութիւնը եղել է նաև հայերին մէջ, ՎԻ դարում, միայն պատան իների վերաբերմամբ, որովհետեւ Փաւատու Բիւզանդացու մէջ գտնում ենք մի այսպիսի հատուած:

Վաչէի Արտաւազդ որդին էր ոի տից տղայ, և ըստ մանակութեան օրինի, ըստ կրօնից Հայոց որպէս օրէն էր՝ զգլուխ մանկոյն այնպէս ի ժամանակին գերծեալ էր զգութիւն մանկան Արտաւագրայ և ցցունս էր թողեալ և գլու արձակեալ):

Յոյների և հովամէացիների մէջ ևս սովորութիւն է եղել, որ ստրուկների մազերը կտրում էին ի նշան ստրկութեան նոյնը և՛ Ամերիկայում. — Նուտկասների մէջ ստրուկների վրայ նայում են արհամարանքով և նրանց մազերը շատ կարճ խուզում, իսկ կարախրի ստրուկներին և զերիներին խիստ արգելուած է երկար մազեր կրել: Ճաճկա-Հայաստանում հայերին արգիլուած էր մօս բուք թողնել: Այս եղանակով էլ բացատրուում է այն սովորութիւնը որ յանցագործին պատժելու համար դարձնում էին ստրուկ և կտրում նրա մազերը: Նե՛լարագուայում գողի մազերը կտրում էին և իրեն իրը ստրուկ յանձնում այն մարդուն: որից նա գնդութիւն էր արել, և որի մօս նա մնալու էր, մինչև որ զերջինս բաւարարութիւն ստանար: Ինական է, որ ստրկութեան այսպիսի մի նշան դրում էր իրը պատիժ մի որևէ յանցանքի, այսպէս կենտրոնական Ամերիկայում շնացող մարդուն նախ ձաղկում էին, ապա մազերը կտրում: Հին Մեքսիկանցիները երրեմն հետեւեալ պատիժն էին տալիս: Նրանք յանցաւորի մազերը կտրում էին միորևէ հրապարակական տեղում: Միջնադարեան Եւրոպայում ևս մազեր կտրելը պատիժ էր համարւում: Մեր մէջ գտնում ենք հետեւալ հատուածը Ս: Խորենացու մէջ.

Տիրան թագաւորի գուստը Երանեակը ամուսնացած էր Տրդատ Բաղրատունու հետ: սակայն «Սա ատեց իւր ամուսին Տրդատին: վատ ալքով էր նայում նրան և քիթը բարձրացրած էր միշտ, ցաւելով իւր մասին: որ ինքը, անսման գեղեցիկը, տգեղի հետ և թագաւորակնը ցածազգի հետ է ընակում: Մի օր Տրդատ զայրանախով սորա վերայիշել է իւր մազերը եւ փետտելով նորա մազերի իմուպաները, հրամայում է զուրս քաշել և սենեակից դուրս ձգել: Հայկական շատ գաւառներում այժմ էլ սովորութիւն է, որ

1) Փաւատոս Բիւզանդ. Ե. գոր. Խ. գլ.

2) Մովսէս Խորենացի. Բ: գիրք: Ե՞՞ գլ: Բարգմ: Սահմանէի.

անբարոյական կանանց ու տղամարդկանց մազերը, ինչպէս և հոգենոր կոչումից զրկող ճողմորակ սնի մօրուքը կտրում թն, ուսափ և շաղըդ մկրտարը, «ծամդ կտրուի» զարձուածքները համարուում են ամենածանր անիծք»:

**Մինչոյն սովորութիւնը կատարուում է նոյն իսկ կենդանիների վերաբերմասբ։**

Բուլանը սում երբ հարսնառ եկազներ իջևանում են հարսի զբաղում, գնարմանառ հիւրասիրող տանտէրերը մեծ զգուշութիւն կը բանիցնեն, որ թշնամի մարդիկը հարմածի ձիերու պոչերը չկտրին, որ մեծ անպատճութիւն և անարգանք է, և ինչպէս շատ անզամ պատահել է; այդ կերպ անարզուած մարդիկ սրտի կսկիծն մեռեր են»),

**Ձեյթունցիներն իրենց թշնամիներից գրեժ լուծելու համար նրանց եղի, ձիու, ջորու և իշխ ազիները կտրում են »),**

Հասկանալի է ուրեմն, թէ ինչու հայ ժողովուրդը ուղու խուզողա մականութն է տալիս այն մարդկանց, որոնք մեծ չարիքներ և բնութիւններ են գործում, իսկ շուշեցիները մինի սուր իրենց անից կտրելու գաղափարը արտայայելու համար ասում են չագին քշկուց։ (պոչը կորեց)։

Այս սովորութիւնից ծագում է այն, որ երկար մազերը ստանում են մեծ յարգանք, Զիրշամների մէջ ամենից մեծ վիրաւորանքը, որ կարելի էր հասցնել մի տղամարդու կամ կոսչներա մազերը խուզեն էր։ Այս հայեացքի պատճառը շատ հասկանալի է, որովհետև այսպիսի գէպքուժ խուզուած մարդու արտաքինը նմաննեցում էր ստրկի արտաքինին, իսկ սրա հետևանքը լինում է այն, որ երկար մազերին մեծ յարգանք է վերագրուում և մինչեւ անզամ մեծութեան նշանակ ծառայում, այսպէս առնդանների մէջ բացի բարձր անձնաւորութիւններից ոչ ոք իրաւունք չունի երկար մազեր թողնելու նոյն իսկ թրքաց իշխանազունները խուզում են մուրուքները, որպէսզի սրանով ցոյց տան որ իրենք միանդամայն կախուած են թագաւորող սուլթանի գթութիւնից։ Յոյները արբունքի ճասակում կրում էին աւելի երկար մազեր, և մազերի հետ կապուած էր նըրանց մէջ մազերի որոշ քաղաքական գիրք։ Յանկների թագաւորների երկար մազերը սրբազն նշանակութիւն ունէին, նըրանք համարուում էին թագաւորական սերնդի նշանակ և պատոյ առանձնաշնորհ։ Քլոտար և Խիլդեբերդը ցանկանալով բաժանել իրենց մէջ իրենց եղրօր թագաւորութիւնը՝ խորհուրդ կազմեցին, թէ ինչպէս վար-

1) Բէնսէ. Բաւկանը։

2) Ուլնիա։

ուին եղբօրոքիների հետ. կարմն նրանց մազերը, որով և ստորագրեն հպատակների կոչման, թէ սպանեն, ձայ մատենազիրները իրենց հիացմունքն արտայայտել են գովելով իրենց հերոսի մազերը, այսպէս Խորենացին Հայկին նկարագրելով քաջազանգուր է կոչում նրան և նոյն ածականը կրկնում է այն ժամանակ, երբ նրա պատերազմն է նկարագրում թէլի դէմ; ուր ոչ թէ նրա մազերի, այլ ոյժի վրայ պէտք էր շեշտել<sup>1)</sup>:

Ժողովրդական երգերը պատմելով Տիգրան Ա. Հայաստանին թերած բարիեների մասին, զարձեալ նրա մազերն են գովում.—

Զայս և որ այլ այսպիսիք բազումք երեր մերոյ աշխարհիս խարտեաց այս և աղէքթէկ ծայրիւ հերաց երուանդեանս Տիգրան<sup>2)</sup>:

Իսկ Վահագնին աստուածացնող երգը նրա մազերը կրակի, և մօրուսը բոցի է նմանեցնում ասելով. նա հեր հուր ունէր և բոց ունէր մօրուա<sup>3)</sup>:

Երկար մազերը, երկրաւոր փառքի այս նշանակը, ծառայում է նաև իրը նշանակ, երկնային փառքին Շատ ազգերի աստուածները, մանաւանդ նրանցից գլխաւորները, աչքի են ընկնում իրենց երկար մօրութներով և երկար, գանգուր մազերով; Հայոց մէջ թէ Աստծու և թէ սրբերի պատերները մօրուքով և երկար մազերով են նկարուած:

Գերդաստանի անդամների հպատակութիւնը նոյնպէս շատ տեղերում արտայայտուած է կարճ մազեր կրելով:

Հասարակական կազմակերպութեան ստորին աստիճաններում կանայք կրում են ստրկական վիճակի այս նշանակը; Սամօանի կանայք կրում են կարճ մազեր, իսկ տղամարդիկ՝ երկար; Նոր կալիգոնիայում զօրապետներն ու ազգեցիկ անձինք կրում են երկար մազեր; իսկ բոլոր կանայք խուզում են իրենց մազերը մինչև ականջները; Հայերիս մէջ միայն տանմեծը, զիւլի ամենառաջաւոր մարդիկ, ինչպէս տանուատէրը, թողնում են մօրուք:

Մրան կարելի է աւելացնել որդիական հպատակութեան արտայայտութեան նմանօրինակ միջոցներ; Մի ժամանակ Եւրոպայում մազերի կտրելը կազմում էր որդեգրութեան ծէսի մի մասը:

Կարլ-Մարտէլը ուղարկել է Պիպինին, իւր որդուն, Լոնգոբարդների թագաւոր Լուիտպարանտի մօտ այն նպատակով, որ վերջինս կտրէր նրա առաջին մազերը, և այս ծիսակատարու-

1) Մովսէս Խորենացի Ա. գ. գլ. ժ.

2) Անդ. Ա. գ. ժԱ. գ.

3) Խոր. Ա. գ. ԻԴ. գլ.

թեան շնորհիւ, ապագայում հանդիսանար իբր հայր, Թլուտվիկոսը ցանկանալով հաշտուել Ալարիքի հետ՝ առաջարկել է նրան որդեգրել իրեն, կտրելով իւր, Թլուտվիկոսի, մօրուքը.

Հայերի մէջ, Աղեքասնդրապօլում, մի երեխայ որդեգրելիս տանում են նրան մի ուխտատեղի, նրա մազերը խուզում սրբի գերեզմանի վրայ, այդ մազերով կապում այն աւելը, որով աւելում են այդ սրբի գերեզմանը և ապա որդեգրող կինը և յետոյ նրա ամուսինը անց են կացնում այդ երեխային իրենց շապի միջով։

Այս տեսակի ծայրատում ծառայել է նաև իբր ննջեցեալներին հպատակուելու արտայայտութիւն, կարափիների մէջ որովհետեւ մազերը կողմում են նրանց հպարտութեան գլխաւոր առարկան, ուստի ցանկանալով բոլորովին անվիճելի կերպով ցոյց տալ իրենց վշտի անկենծութիւնը իրենց ազգականի կամ բարեկամի մահուան առիթք վ, նրանք խուզում են իրանց մազերը ստրուկների և գերիների նման։ Այժմ էլ հայերի մէջ Մոքսում կանայք կտրում են իրենց մազերը։

Ցոյների և հռովմէացիների մէջ սպի օրերին կարճ խուզում էին իրենց մազերը. Միննոյն սովորութիւնը տեղի է ունեցել և հայոց մէջ, այլապէս կարիք չէր լինի, որ 325 թուին Վաղարշապատում գումարուած եկեղեցական ժողովը դնէր հետևեալ կանոն։

«Որ կոծ գնեն և զէ երսն խզեն և զնակատս հարկանեն, նզովեալ լիցին ի կեանս և ի մահ ։»)

Նոյն բանն է ասունաև Դաւիթ Ալաւելայ որդին. «Որ խզէ զէ երն և կամ ճակատ հարկանէ, և արիւն հանէ, և կամ զօծիս պատառէ, այլազգաբար զէ ատար հերոցն փետէ, այսպիսիքն անյոյս են ի կենացն յաւիտենից» ։<sup>1)</sup>

Հայերիս մէջ ընդհանրացած սովորութիւն է, որ ննջեցեալին թաղելուց միքանի, սովորաբար 7 օր յետոյ, բարեկամ տղամարդիկ հաւաքում են ննջեցեալի տունը և տղամարդկանց մօրուքները ածելել տալիս, որից յետոյ արդէն սրանք սկսում են իրենց առօրեայ պարապմունքը։

Շատ հաւանական է, որ այս սովորութիւնը մնացորդ է այն ծիսին, որով մարդիկ զոհ բերելով իրենց մազերը ննջեցեալի ոգուն, արտայայտում էին իրենց սէրը, հպատակութիւնը դէպի նաւ-

ննջեցեալներից դէպի նահատակները, սրբերը և ապա աստուծութեան անցնելը էվոլիւցիայի աստիճաններ միայն լինե-

1) Արէլ Արքականկոսու Միիթարեան Պատմ. ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ. Էր. 21

2) Դաւիթ-Ալաւելայ որդի. Աղդ. Հանդ. Էր. 124

լով, ամսնում ենք, որ մինոյն ծէսը կատարուել է նաև սրբերի, աստուածների վերաբերմամբ:

Յոյների մէջ երբ երեխան դառնում էր նորա մազերը խուզում էին կրօնական հանդիսաւոր ծիսակատարութիւններով և մազերը նուրիում մի որոշ աստուածութեան, սովորաբար գետի պատճուն: Մինոյնը աեղի էր ունենում նաև հոռվմէացիների մէջ և արագիսի գէպերում կարուած մազերը նորիրուում էին մի որեւէ աստուածութեան: Մազերի զոհաբերութիւնն եղել է և հրէաների, ինչպէս և արաբների մէջ: Հայերի մէջ երեխայի մազերը առաջին անգամ խուզելիս այժմ էլ տանում, եկեղեցու պատի ծակերն են կոխում, մի ապացոյց, որ մի ժամանակ յունաց պէս հայերն էլ նորիրել են մի որևէ աստուածութեան:

Սակայն այս սովորութիւնն աւելի որոշ երկում է այս երեխաների վրայ, որնք սրբի տուած են համարուում, այսինքն որնց ծնողները ամուլ լինելով սրբի դուռը ուխտ են գնացել և ապա ունեցել այդ երեխան: Այսպիսի երեխաների մազերը բուռտը վլին չեն կտրում մինչև եօթ տարեկան դառնալը, Այս ժամանակ տանում են նրան նոյն սրբի դուռը և այստեղ, սրբի գերեզմանի վրայ խուզում երեխայի մազերը և նրանց հիւսով կապում այս աւելյը, որով աւելում են սրբի գերեզմանը:

Քարձր Հայոց բնիկների և այստեղից գաղթածների մէջ սովորութիւն կայ, որ երիտասարդը առաջին անգամ մօրուսը սափերելիս՝ ինդրում է մինին և միրուքի քաւոր լինել, և աս միբանի ընկերների հետ այս երիտասարդին տանում է իւր տուն հիւրասիրում և ապա կանչում սափերիչին, որ հանդիսաւորապէս սափրում է այս երիտասարդի մօրուսը, որի կողքին կանգնում է «մօրուքի քաւորը», և շարունակ ասում սափերիչին. «Հը, սանիկիս լաւ թրբաց երաց, Միքանի օրից երիտասարդն էլ փոխադարձարար հրաւիրում է իր տուն քաւորին մի քանի ընկերներով և հիւրասիրում»:

Կարսի բնիկների մէջ սովորութիւն է եղել, որ եւր մի ծերունի որոշել է մօրուք թողնել, ինզըել է մինին քաւոր լինել, և աս միբանին անգամ սափերել է տուել սրբ մօրուքը և մի երեսսրբիչ ու մի սանր նուփերել նրան:

Ամուսնութեան միջոցում թագաւորի հանդիսաւոր կերպով սափերուելու ծէսը նոյնպէս, որ միանգամայն ընդհանրացած է Հայերիս մէջ, պէտք է մասցորդ համարել մի որևէ աստուածութեան գոհաբերութեան:

Մինոյն սովորութիւնը մուտք է գործել նաև կրօնական ծէսերի մէջ. հոգևոր կոչումն ընդունողի գլխի մազերից չըրս աե-

զից խաչաձև կտրում են, աղօթքներ կարդալով, որով արտայայ՝ տում են, ոչ նորընծան իրեն նուիրում է աստուածութեան.

ԺԵ. — Հպատակութիւն արտայայտող շատ ծէսերի հետ տեղի է հնանում և արիւնառութիւն Այս ծէսի սկիզբը գուցէ մասամբ գտնում է մարդակերութեան մէջ, աակայն նրա տարածուելու զլխաւոր պատճառը պէտք է որոնել այն սովորութեան մէջ; որ մարդիկ իրենց արիւնը միմեանց առաջարկելով կամեցել են աշպացուանել իրենց հաւատարմութիւնը, փոխադարձ սէրը Այսպէս Հայերի մէջ սովորութիւն է եղել, որ դաշնադրութիւն կապելիս աջ ձեռներից արիւն էին հանում և փոխադարձարար խմում, ինչպէս վկայում է Վաղերիս Մաքսիմոս ասելով.

«Սարիասպէր ընդէմ հօրն իրոյ Տիգրանայ Հայոց թագաւորքի ետ բան ընդ բարեկամս ամենացուն յաջոյ ձեռունէ հանել արիւն, և զմիմեանց ըմպել զարիւնա: Միւնոյն սովորութիւնը եղել է նաև սկիւթացիների մէջ: Միւնոյնը տեղի է ունենում և այժմ հայերիս մէջ, երբ ցանկանում են ողջոյն աղբէր լինել. հկեղեցում միմեանց ողջոյն տալուց յետ կտրում են մատերը և փոխադարձար խմում արիւնը:

Այս միւնոյն ծէսը կատարւում է նաև ննջեցեալների վերաբերութեամբ. ցանկանալով արտայայտել իրենց անձնուիրութիւնը գէպի ննջեցեալի ողին, սպուրները պատառուում էին իրենց երեսները և արիւն հոսկցնում. ահա թէ ինչպէս է նկարագրում այս Փաւառու Բիւզանդացին:

\*\*\* Յետ մահուան ներսէսի, յորժամ զմեռեալն լային մողովք և փանգուք և վնօք զկօծոն աւարուցն կաքաւելով, զտիգ-սըն հատեալս, զերեսս պատստեալս, արբ և կանայք պղծութեամբ ճիւազութիւնը պարուք գէմ ընդ գէմ հարկանելով, և կամ ափ հարկանելով, զմեռեալն յուղարկէին :)

ԺԵ. — Երբ զոհ է բերում արիւնը գթութիւն հայցնելու դօրապետի ողուց, և այս կատարւում է ոչ միայն նրա ազգականների այլ և անհմի միւս անդամների կողմից, որոնք բալորն էլ հաւասարապէս զգում են երկիւզ և սոսկում նրա ոգու առջև. — այն ժամանակ այս նպատակով կտրուածների սպինները դառնում են հպատակութիւն արտայայտող նշաններ, միանգամայն մ. և ըստ լոր ծայրատումների նման: Հոնները, որ Աստիլլաին թաղելիս

1) Դիրք թ. յիւ. Խաճիճ. Հատկ. Գ. 300

2) Բիւզանդ. Գ. 31.

ծածկել են իրենց ամբողջ երեսը վերքերով, և թուրքերը, որ նոյն են անում սուլթանի թաղման ժամանակ, այսպիսով իրենց վրայ նշաններ են դնում, որոնք որոշում են նրանց որպէս իրենց պետերի սարուկների:

Երբեմն այնպիսի մի թագաւորի մահուան ժամանակ, որի յաղթութիւնները դարձրել էին նրան ազգի կազմակերպիչ, այդ տեսակի նշաններ կրում են ոչ միայն նրա ժամանակակիցները, այլ և վերջններիս կողմից դրում են նաև իրենց որդիների վրայ, այսպիսի գէպքերում այդ նշանները դառնում են ազգային ընորդշատկանիցների:

Շատ հաւանական է, որ մեռած հօրը, կամ պետին և կամ աստուածացրած հանգուցեալին իւր անձնութիւնը արտայայտելու նպաստակով կատարուած կտրուածքների սպիներն սկիզբն են տուել այն կտրուածքներին և նկարներին, որ յայտնի է կտրում, տատուած, անունուլ:

Այս սովորութիւնը, որ այնքան տարածուած է վայրենի և կիսակիրթ ժողովրդների մէջ և որի մնացորդները նոյն իսկ այսօր նկատելի են Եւրոպայում, գոյութիւն են ունեցել և ունի նաև հայերին մէջ, իրօնական զգացրումից յառաջացած այս սովորութիւնը հետգհետէ դարձել է տամները յատկանշող նշան և վերջերքում պճնանք:

Սալմաստի, Շատախի, Մոքսի և այլ շատ խուլ անկիւնների հայերը կտածումներ են կատարում երեսի, ձեռքերի և ստինքի վրայ այսպէս. Թելած ասեղը նախապէս ներկելով թանաքի կամ մի ու ներկի մէջ, անց են կացնում կաշու միջով. ասեղի անցած տեղում ներկը մնալով սպի և ու բիծ է յառաջացնում: Ոմանք էլ նոյնպիսի բծեր յառաջացնում են վատելով. յարէթի կտրորին տալով զանազան ձեւ, գնում են սովորաբար ծղիկի վրայ և վառում. սաստիկ ցաւը մեղմելու համար փոքր ինչ բարձրից թաշկինակով կապում են Երուաղիմում ուխտաւորների ձեռքերին խփուող մահաեսութեան նշանն էլ միևնոյն կտածումի մնացորդ է:

ԺԹ—Մենք տեսանք, որ վայրենիները հաւատալով որ ոգին տարածուած է մարմնի լոլոր մասերի մէջ, պահում են իրենց մօտ մեռած թշնամու մասունքները, յուսալով նրանց միջոցով կառավարել մեռածի ողին, եթէ ոչ անձամբ, զոնէ տեղական կախարդների օգնութեամբ:

Այս միևնոյն պատճառը ստիպում է նրանց պահել իրենց մօտ և այն մարդու մարմնից կտրած մասը՝ որին ստրկութեան են ենթարկում, և վայրենին, ինչպէս և նրա ստրուկն, այս գէպ-

քումն էլ լիովին հաւատացած են լինում, որ մարմնի այս մասը իշխանութիւն և միջոց կըտայ վնաս հասցնելու այդ մասի տիրոջ ամբողջ էութեան։ Առաջին իսկ խօսքերը, որով դիմում է ձեզ կախարդը՝ այն պահանջն է որ բերէք նրա գոհի մաղերից կամ եղունգներից, և կամ հանդերձի մի կտորը, որ տոգորուած է այն հոտով, որ համարուում է նմանօրինակ նրա ովուն, իսկ սրանից յառաջանում է այն՝ որ իւր սարուկի ատամը կամ մատի յօդը և կամ մինչև անգամ նրա մաղերից մի ծամ պահող տէրը ամէն ժամանակ կարող է տաննել զբանց կախարդին, ենթարկելու անհնար- դանդ սորկին հիւանդութեան, չարչարանքի, մահի։ Եւ այս պատ- ճառով էլ սորուկը երկիւղից արտայայտում է հնազանդութիւն։

Այսպէս կարելի է բացատրել և այն հայկական սովորու- թիւնը, որ սիրահարուած երիտասարդներն իրենց սիրած աղջկայ մաղերից կտրելով համայիլ են շինել տալիս, այսինքն մաղը փա- թաթում են մի թանգաղին կտորի մէջ, եռանկիւնաձև ծալում, ասդնազործով և կամ արծաթով պատում և իրենց մօտ պահում։

